

Կրթական ընդհանուր հասարակական
խորհուրդի Կրթական անօրինակ

ՄԱՍԻՍ

ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԻՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1^Ի ԵՒ 16^Ի

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԲՈՒՄԲ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ (Ա. Տեղագետ)

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ, Մ. Գ. ՄՈԶԵԱՆ, Յ. Թ. ՀԻՂԻԵԱՆ, Յ. ՍԷԹԵԱՆ

ԱՐՏՈՆԱՏԻՐ

Կ. Ս. ԻԼՔԻԼԵԵԱՆ

Թիւ 3

1 Յունիս

ՏԵՐԻՆ

ՅՈՎՀ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1894

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հոգեգանական ծանօթութիւնք	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Դպրոցական առողջապահութիւնք	Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ
Նախակրթարանաց ուսուցիչներու պատրաստութիւնք	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Գրաբարի ուսումը նախակրթարանաց մէջ	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Կենդանաբանութեան դասեր	Ա. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
Բուսաբանութեան դասեր	Մ. Գ. ՄՕԶԵԱՆ
Ընթացք Թրանսերէն լեզուի	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
Լուրք եւ տեղեկութիւնք	
Մէկ երկու ֆենադասութեանց առթիւ	
Հարցման մը պատասխանք	

Ա Ձ Դ

Մասիսի խմբագրութիւնը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ բոլորակութեան ձեւի տակ գոհացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրութիւն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէթոսներու, կրթութեան ո՛ր եւ է նիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին:

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շանեկան ու ամիսփ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետա-
հետեւող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին
սահմանէն դուրս չեն ելներ:



ԽԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍԶՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43^{րդ} Տարի Նոր շրջանի քիչ 3 1 Յունիս 1894

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԻՔ

Ա.

Կրկնակ կեանք մտադուռ. — Հոգեբանութեան տնայական. — Հոգեբանական ու բնախօսական երեւութից տարբերութիւնք. — Հոգեբանութեան կարեւորութիւնը դաստիարակին համար. — Հոգւոյն կարողութիւնները, անոնց գործունէութեան եղանակը. — Հոգեբանութեան մեքոնք:

Մարդկային էակը կրկնակ կեանքով ապրող էակ մ'է, թէ եւ այդ կրկին կեանքեր առնչակից ու գիրկընդխառն են իր մէջ եւ իրարու վրայ խորապէս ներգործող: Սոքա են փիզիքական կեանքը ու բարոյական կեանքը: Մարդը կ'ապրի իրբեւ Ֆիզիքական, մարմնաւոր էակ մը. նա կը շնչէ, կը սնանի, կը մարսէ, արիւնը շրջան կ'ընէ իր մէջ, սիրտը կը բարակէ. նա կը շարժի, կ'երթայ, կուգայ, արթուն է կամ կը քնանայ, իր գոյնքերը կը կծկին ու կը թուլնան, ջիւղերը կը թրթռան, իր գործարանաց գործունէութիւնը հեշտ ու անարգել է կամ աւելի կամ նուազ դժուարացած: Ահա՛ իր Ֆիզիքական կեանքը: Բայց նաեւ մարդը կ'ապրի իրբեւ բարոյական, հոգեկիր էակ մը. նա կ'զգայ, այն է՝ հաճոյքի ու ցաւի, ուրախութեան ու տրտմութեան, սիրոյ ու ատելութեան ընդունակ է. կը մտա-

ծէ, այն է՝ մտապատկերներ ու գաղափարներ ունի ու զանոնք կը լծորդէ, կ'ըմբռնէ, կը յիշէ, կ'երեւակայէ, կը բազդատէ, կը գատէ, կ'իմաստասիրէ, կը նախատեսէ. նա կը գործէ, այն է՝ կը կամի կամ կը բերուի ընել այս ինչ գործը կամ չընել, եւ ըստ այսմ իր այս ինչ ֆիզիքական կամ իմացական կարողութիւնները գործունէութեան մէջ դնել կամ ոչ, այս կամ այն ուղղութեամբ, նկատմամբ հաճելոյն, օգտակարին, բարւոյն զօր կ'որոշէ տհաճելիին, վնասակարէն, չարէն: Ահա՛ իր բարոյական կամ հոգեկան կեանքը:

Հոգեբանութիւնը ուսումնասիրութիւնն է այն ներքին իրողութեանց որք մարդուն բարոյական կեանքը կը կազմեն: Այս կարգի իրողութիւնք կամ երեւոյթք կը կոչուին հոգեբանական, հակադրութեամբ մարդուն ֆիզիքական կեանքը կազմող իրողութեանց կամ երեւութից որք բնախօսական անունը կ'առնուն:

Հոգեբանական իրողութիւնք կը կոչուին նաեւ գիտակցական, վասն զի նոքա մի միայն մեր ներքին կեանքը, մեր հոգեկան վիճակները զգալու կարողութեամբ, այն է գիտակցութեան միջո-

ցաւ կրնան ճանչցուիլ, ու կը ճանչցուին մի եւ նոյն ատեն որ տեղի կ'ունենան մեր մէջ: Զգայարանքները չեն անոնց ծանօթութեան առաջին աղբիւրը: Այսու հապէս կը տարբերին բնախօսական երեւոյթներէն, որք զգայարանաց միջոցաւ կը ճանչցուին: Դարձեալ, այս վերջինները միջոցին մեջ տեղ մը կը գրաւեն, տարածութիւն ու ձեւ ունին ու չափելի են, մինչդեռ հոգեբանական երեւոյթք լոկ տեղաւորութեան մեջ տեղի ունին, եւ բնաւ տարածութիւն ու ձեւ չունին եւ նիւթապէս չափուելու ընդունակ չեն, այլ իրենց չափը սասակութեան կամ տեւողութեան աստիճաններուն մէջ է միայն: Բաց աստի, հոգեբանականք ուղղապէս ըմբռնելի են միայն եւրասկայեան որուն մէջ կը կատարուին, բնախօսականք կրնան ուղղապէս ըմբռնուիլ ո՛ր եւ ի մէկէ մը որ կը գտնուի անոնց ներկայութեան(*): Ահա որոշիչ նշաններ որք անկարելի կ'ընեն չիփթել երկու կարգի իրողութիւնները: Բնախօսականք իրարմէ տարբեր են անոնք:

Հոգեբանական երեւութից ու անոնց օրինաց ծանօթութիւնը անհրաժեշտ պէտք մ'է մանկավարժ ուսուցչին: Սա պաշտօն ունի մարդկային կարողութեանց բնական զարգացումն ուղղելու, եւ այդ անկարելի է անշուշտ առանց ճանչնալու այդ կարողութիւնները եւ անոնց գործելու եւ զարգանալու եղանակները: Առանց մարդկային բնութիւնը ուսումնասիրած ըլլալու, ի՞նչպէս կրնայ յաւակնութիւն ունենալ մարդիկ պատրաստելու:

(*) Վերը բնախօսական երեւոյթ մ'է որ մարմնոյն այս ինչ մասին վրայ կը գտնուի, որոշ ձեւով ու գոյնով, որ կրնայ շօշափուիլ, տեսնուիլ, եւ որուն լայնութիւնն ու խորութիւնը կրնան չափուիլ: Բայց վերջին պատճառած ցաւը գիտակցական երեւոյթ մ'է զոր ենթուկայն, վերաբերեալ միայն կ'ըմբռնէ: անոր մտաւոր պատկերը, վերջին ընդհանուր գաղափարը, անցնելէն ետքը յիշատակը, անոր ու պատճառին կապակցութիւնը, մտածումը թէ նոյն պատճառը միշտ նոյնպիսի վերք մը յառաջ պիտի բերէ՝ են հոգեբանական երեւոյթներ:

պաշտօնին: Տղուն բարոյականը կազմելու համար, գիտնալ պէտք է մարդկային սրտին բնական յօժարութիւններն ու յոյզերը, կրքերն ու անոնց ծագումն ու ընթացքը, բնազդմամբ, կամօք ու սովորութեամբ կատարուած գործունէութեան պայմանները, մարդուն բարոյականութեան յաւակնիչներն ու որոշիչ ձգտումները: Վարձք կամ պատիժ, գովեստ կամ յանդիմանութիւն, խրատ կամ սաստի՞նչպէս ի գործ դնել, երբ չգիտեմք թէ ի՞նչպիսի գետնի վրայ կը գործեմք, ի՞նչ նպատակով կամ աննպատակ ազդեցութիւն յառաջ կրնան բերել անոնք զգայնութեան ու գործունէութեան վրայ, ընդհանրապէս, կամ նկատմամբ այս կամ այն նկարագրի: Ի՞նչպէս կարելի է ապահովապէս ընտրութիւն ընել ուսուցման մեթոտի ու եղանակաց ու զանոնք պատշաճեցնել ուսանողաց հասակին ու մտաւոր կարողութեան, երբ մտքին գաղափարները կազմելու, պահելու, յօգելու եւ արտայայտելու կերպերն ու աստիճանական զարգացման օրէնքները չենք ուսումնասիրած: Որպէս երկրագործին չի բաւեր լաւ սերմեր ունենալ ցանելու, այլ պէտք է որ ճանչնայ նաեւ հողն ուր պիտի սերմանէ, այսպէս եւ դաստիարակին անհրաժեշտ է գիտնալ հոգին որոյ վրայ գործել է իր պաշտօնը: չի բաւեր իրեն գիտնալ միայն իր ուսուցման նիւթը:

Հոգեբանութիւնն խորիմիջ ու պիտանեգոյն օժանդակ է մանկավարժութեան:

Գիտակցական ըլլալն ընդհանուր ու հասարակաց ձեւն է հոգեբանական երեւութից: Ինչ որ աւելի կամ նուազ պայծառօրէն չ'իյնար գիտակցութեան գաղտին մէջ՝ հոգեբանութեան չի վերաբերիր, հոգեբանական իրողութիւն մը չէ: Այլ այս իրողութիւնք ամէնքն իրարու չեն նմանիր: ուրիշ հանգամանքներով իրենց մէջ ունին նմանութիւններ ու տարբերութիւններ, որոցմով երեք որոշ դասերու կը բաժնուին: Կան զգացական ե-

րեւոյթներ, իմացական երեւոյթներ ու կրօնական երեւոյթներ :

Մեր կրած այլ եւ այլ հաճոյ կամ անհաճոյ տպաւորութիւնները, զանազան քաղցր կամ դառն ազդեցութիւնները, խնդի, վշտի, երկիւղի, յուսոյ, սիրոյ, ատելութեան կերպ կերպ յուզումները, տենչանքի կամ խորշանքի ամէն շարժումները, ամէնքն ալ զգացողութիւններ կամ զգացումներ, զգացական երեւոյթներ են : Հակառակ իրենց տարբերութեանց, ամէնքն ալ իրարու կը նմանին այնու որ ամէնքն ալ հաճոյական կամ ցաւազին կերպով զգածուելու եղանակներ են, ու ամէնքն ալ կրօնորակներ ու ճակատագրային են, այսինքն կը կրեմք զիրենք ու չեմք կրնար դիմադրել իրենց երբ կը գտնուինք զիրենք յառաջ բերող պայմանաց առջեւ :

Առարկայի մը ձեւոյն ու դոյնին ըմբռնումը, իրի մը կամ տեսարանի մը պատկերը, անցեալ դէպքի մը յիշատակը, ընդհանուր գաղափար մը որ կարգ մը իրեր կամ երեւոյթներ կը համառօտէ, հաստատութիւն մը զոր կ'ընեմ գաղափարի մը վրայ ստորագելով կամ ժխտելով յատկութիւն մը, զոր օրինակ՝ գեղեցկութեան յատկութիւնը ստորագելով բարւոյ գաղափարին ու ժխտելով զայն չարի գաղափարին վրայ, ճշմարտութենէ ի ճշմարտութիւն անցք մը, զոր օրինակ՝ երբ չըջանակի մը յատկութեանց ծանօթութենէն կ'անցնիմ անոր տրամագծին՝ շառաւիղին կրկինն ըլլալու գաղափարին, եւ այլ նման իրողութիւնք իմացումներ, իմացական երեւոյթներ են, եւ, թէ եւ տարբեր իրարմէ, այլ հիմնական հասարակաց հանգամանքներ ունին : Այն է որ ամէնքն ալ գիտակցութեան կը ներկայեն ըմբռնումներ, տեսիլներ կամ առարկայներու կամ անոնց յարաբերութեանց, երեւցողից (représentatif) են, ու նաեւ գործօն ու ճակատագրային, վասն զի այդ երեւութից ի մեզ տեղի ունեցած ատեն գործօն կ'զգամք զմեզ, եւ սակայն երեւութին ընթացքը կախում չունի մեր կամքէն, այլ կը կատարուի մտքին յատուկ օրինաց համաձայն :

Զանազան կարգի գործողութիւններ կը կատարեմ. կը հագուիմ, գործիս կ'երթամ, տեսակցութիւն մը կ'ունենամ, նամակ մը կը գրեմ, տուն կը դառնամ, գիշերը կը հսկեմ աշխատելու կամ զբօսելու համար կամ շուտ կը պառկիմ, եւն : Եւ անոնք երեւոյթներ, որք իրարմէ կը տարբերին, բայց ամէնքն կամաւոր գործունէութեան արդիւնքներ են, ամենուն ալ պատճառ կը համարիմ իմ կամքս : ամէնքն ալ գործօն եւ ազատ երեւոյթներ են, քանզի երբ այս շարժումները կատարելու որոշում կուտամ՝ կ'զգամ թէ կը գործեմ, եւ յետոյ կ'զգամ թէ ազատօրէն կուտամ այդ որոշումը եւ թէ կրնայի շտալ ու չընել՝ եթէ այնպէս ուզէի : Կրօնական երեւոյթներ են անոնք :

Այս երեք կարգի իրողութիւնները կը վերագրեմք հոգւոյ երեք կարողութեանց : զգացականները՝ զգայնութեան, իմացականները՝ իմացականութեան, կամականները՝ կամաց : Կարողութիւնք հոգւոյն համար են ինչ որ յատկութիւնք՝ անշունչ նիւթոյն, եւ պաշտօնները՝ գործարանաւորեալ մարմնոց համար : Նոքա բարոյական աշխարհի զօրութիւններն են :

Ամէն հոգեբանական կամ գիտակցական երեւոյթք այս երեք գաղափարքէն միոյն կը վերաբերին անպատճառ : միայն թէ պէտք է դիտել նաեւ, աւելի ճշգրտութեան ու ամբողջութեան համար, որ, հոգւոյն ու մարմնոյն սերտ առնչութեանց պատճառաւ, կան միջին իրողութիւններ որք կարծես հոգեբանութեան եւ բնականութեան սահմաններուն վրայ կը դեգերին, ինչպէս են կէս-գիտակից կամ աղօտապէս գիտակցական շարժումներն ու բնազդումներն, որոնք ֆիզիքական գործունեութեան հետ կրնան կապուիլ : Միւս կողմանէ, հարկ է զանազանել ֆիզիքական զգայնութիւն մը եւ բարոյական զգայնութիւն մը, որոշելու համար մարմնոց հաճոյքներն ու ցաւերը, զգացողութիւնները, որք ֆիզիքական գործարանաց հետ կապուած են սերտիւ, եւ որոց-

մով կ'սկսի զգայնութիւնը, սրտի ու մտաց ուրախութիւններէն ու վիշտերէն, զգացումներէն, որք աւելի ուշ երեւան կուգան եւ իբր նախընթաց իմացական իրողութիւններ կ'ենթադրեն։ Այս վերջինները, որք բարոյական զգայնութիւնը կը կազմեն, պարտին իմացականութենէն յետոյ ուսումնասիրուիլ, վասն զի մասամբ անկէ կը յառաջանան։ Հետեւաբար հոգեբանական կարողութեանց ցուցակը կրնայ կազմուիլ այսպէս, միշտ հիմնապէս մնալով անոնց երեքի բաժանումը.

1. Ֆիզիքական գործունեութիւն.
2. Ֆիզիքական զգայնութիւն.
3. Իմացականութիւն.
4. Բարոյական զգայնութիւն.
5. Կամաւոր գործունեութիւն.

Հոգւոյն կարողութիւնք կամ հոգեբանական երեւութիյն խումբը, թէպէտ բնութեամբ իրարմէ որոշ, բայց վերլուծութեամբ մանաւանդ եւ ուսումնասիրութեան դիւրութեան համար իրարմէ կը բաժնուին, իսկ հոգեբանական կեանքի իրականութեան մէջ խառն ու անբաժան են եւ միշտ գործակից ու աջակից իրարու, միմեանց կարեւոր ու փոխադարձաբար ներգործիչ միմեանց վրայ։ Կամքը պէտք ունի իր նպատակն ու միջոցները ճանշնալու եւ զգացումէն յորդորուելու։ Իմացականութիւնը չի կրնար գործել առանց զգացողութեանց, առանց զգացական պատկերներու, եւ կամքով է որ ուշադրութիւնը կը սեւեռի իր առարկային վրայ։ Զգայնութիւնը՝ թէ եւ իր ստորին կէս-գիտակից աստիճանին մէջ կրնայ ըլլալ թերեւս առանձին, բայց իր զարգացման մէջ իմացականութենէն կ'ընդունի իր գիտակից սէրերուն կամ ատելութեանց առարկայները, եւ կամքով գործունէութիւնը կը սնուցանէ զայն, կը զարգացնէ, կը զօրացնէ։

Հոգեբանութիւնը — թէ եւ կայ իր քանաչափական (rationnel) մասը, այն է

հոգւոյն բնութեան ուսումնասիրութիւնը, որ բնագիտական է —, իբրեւ գիտակցական երեւոյթները եւ անոնց օրէնքները ուսումնասիրող գիտութիւն, փորձառական գիտութիւն մ'է եւ ըստ այսմ իր մեթոտը զննական, դիտողական է։ Փորձառական հոգեբանութեան մէջ զննութեան, դիտողութեան առաջին միջոցը մեր գիտակցութիւնը, մեր եսն է։ Մարդ իր անձին գիտակցութեամբ, ներքնահայեցութեամբ, ինքնազննութեամբ միայն կրնայ գիտնալ թէ ի՞նչ է խորհիչ, զգալ, կալիչ, Բնաւ ո՛ր եւ է արտաքին գիտողութիւն չի կրնար արժեք կամ փոխանակել այս ներքին գիտողութիւնը. այն է առաջին աղբիւրը հոգեբանական ծանօթութեանց, Բայց հոգեբանը ինքնազննութեամբ, իր եսը դիտելով ստացած ծանօթութիւնները կրնայ եւ պարտի ամբողջացնել, օտուգել, ընդհանրացնել՝ դիմելով արտաքին գիտողութեան, այն է կատարելով զննութիւններ այլ մարդոց վրայ։ Թէպէտ չէ կարելի թափանցել այլոց հոգին, մտնել ուղղակի անոնց գիտակցութեան մէջ, բայց արտաքին նշաններէ զօրս նոյն կամ նման կը գտնենք մեր եւ անոնց վրայ, եւ զորս մեր վրայ արտայայտութիւնն ըլլալ դիտած էինք գիտակցական վիճակներու, կը հետեւնենք անոնց հոգեկան բնութիւնը։ Լեզուական հաղորդակցութեան միջոցով ալ կը ծանօթանանք իրենց ներքին տպաւորութեանց ու գործողութեանց, եւ պատմութիւն ու մատենագրութիւն ճոխ աղբիւրներ են ժամանակով ու միջոցով մեզմէ հեռու եզով մեր նմանեաց գիտակցական վիճակներուն ուսումնասիրութեան։ Այսպէս կ'ընդլայնի հոգեբանական զննութեանց դաշտը եւ իրողութիւնք բազմապատկուելով երեւան կը բերեն ընդհանուր երեւոյթները, օրէնքները, հոգեբանութիւնը ի գործ կը դնէ նաեւ բաղդատական մեթոտը, հասուն մարդոյն ու տղուն, առողջին ու հիւանդին, քաղաքակրթելոյն ու վայրենւոյն, եւ մինչեւ իսկ մարդոյն ու անասնոյն գիտակցական երեւոյթները հա-

մեմատելով, եւ այսու նոր լոյսեր ստանալով իւր առարկային կատարելագոյն ճանաչմանն համար:

Բ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բ.

Մեր նախորդ յօդուածին մէջ, երկու մասի բաժնելով այն ազդեակները որոնց կրնայ ենթակայ ըլլալ տղան դպրոցին մէջ, խօսեցանք անոնցմէ մէկուն. — Միջավայրին հանգամանացը — վրայ: Ներկայ յօդուածով պիտի խօսինք միւսին — այն կարգ կանոնին վրայ որով կ'ապրեցնենք մեր տղաքը դպրոցներու մէջ:

Պէտք է խոստովանիլ թէ գիտական սկզբունքներու վրայ հիմնուած կարգ կանոն մը չունինք, այլ ծնողաց, ու շատ անգամ ալ հոգարարձուաց քմահաճոյքէն բղխած հրամաններն են զորս իբր ուղեցոյց կ'ընդունինք մեր գործին մէջ: Որովհետեւ անոնք կ'ուզեն որ շատ բան սորվին տղաք, ուստի մենք ալ՝ համակերպելով անոնց պահանջին, չարաչար կ'աշխատեցնենք խեղճ տղաքը՝ կարճելով անոնց զրօսանքի ու հանգստի ժամերէն մինչեւ որ արիւն գայ անոնց քթէն, մինչեւ որ նուաղին, մինչեւ որ անոնց մարմինը տկարանայ կամ միտքը բթանայ:

Ոչ միայն դպրոցին մէջ շատ կ'աշխատեցնենք զանոնք, հապա նաեւ այնչափ յուռի կերպով կը գործածենք ժամանակը որ 9—10 տարեկան տղաքներ տետրակներով ու գրքերով բռնաւորեալ տուն կ'երթան երեկոյները՝ անյարմար կանթեղի մը ու թերեւս աւելի անյարմար գրասեղանի մը առջեւ կորաքամակ գրելու կամ կարդալու այնչափ որ իրենց երազին մէջ ալ չարունակեն գրել ու կարդալ:

Իրաւունք չունինք մենք այսպէս չարաչարելու տղաքը. պարտաւոր ենք մանաւանդ ասպակովել իրենց համար ապագայ հանգիստ. այսպիսի չարատանջ աշխատութիւն մը ոչ միայն մարմնոյն զանա-

զան գործարանները կը տկարացնէ, այլ եւ ուղեղէն ալ կը բառնայ կարողութիւնն օգուտ քաղելու իր մթերած ծանօթութիւններէն:

Գործնական կեանքի մէջ, քիչ մը դիտողութեամբ, ականերեւ կը տեսնուի Ֆիզիքական ու մտաւորական անկումն անոնց որոնք անձնատուր եղած են մտաւոր չարավաստակ աշխատութեան: Դըպրոցին մէջ ալ, աշակերտաց վրայ կը տեսնուի միեւնոյն արդիւնքը. անոնք, որոնք ծոյց կ'ըսուին, շատ աւելի կորովամատ են ու խելացի քան թէ անոնք որոնք ջանաւորի համբաւ կը վայելեն:

Ուրեմն, ամէն նկատումներէ ու քմահաճոյքներէ վեր, լոկ մեր սանուց բարին ունենալով իբր նպատակ, պարտաւոր ենք նուազեցնել մտաւոր աշխատութեան ժամերը եւ աւելցնել մարմնական մարզանաց ժամերը:

Մարմնական մարզանաց կարեւորութեանը վրայ շատ անգամներ գրուած ու խօսուած է. աւելորդ կը համարինք կրկնել զանոնք. մի քանի կէտերու վրայ միայն կ'ուզենք ուշադրութիւն հրաւիրել:

Մարմնամարզի ուսուցումը քաղաքացի ու գիւղերու մէջ, ամէն տեղ նոյն ըլլալու չէ. տեղւոյն համեմատ փոխուելու է:

Քաղաքացի մէջ շատ տղաք օգասուն բնակարանէ զուրկ են, ազատ դաշտերու մէջ վազելու առիթներ չունին, ուստի գունատ, նիհար ու տկար են անոնք: Ի՞նչ պէտք է անոնց. — Մարմնամարզ, եւ այս՝ չէ թէ իբր պերճանք մը, այլ իբրեւ միջոց մը փրկելու իրենց վտանգեալ առողջութիւնը. անո՞վ պիտի կըրնան իրենց կազմուածքի տկարութիւնները դարմանել, հետզհետէ պիտի ստանան Ֆիզիքական կորով, կատարեալ առողջութիւն եւ մարմնոյ զանազան մասանց ներդաշնակ զարգացում. քաջաւորջ տղաքներ պիտի ըլլան. կոշտ կերակուրը զոր կ'ուտեն աւելի՛ արիւն պիտի ապ անոնց եւ ինչ որ բնակարանի օդին մէջ չէին կարող գտնել — բաւա-

կան թթուածին — զայն լիառատ պիտի վայելեն մարմնամարզի դասերով. ուստի, իբր կազդուրիչ միջոց մը, քաղաքաց մէջ մեծ տեղ մը գրաւելու է մարմնամարզը:

Իսկ գիւղերու մէջ տարբեր ըլլալու է մարմնամարզին նպատակը. իբր կազդուրիչ՝ երկրորդական համարուելու է իր դերը գիւղական դպրոցներու մէջ. Գիւղացի տղան ալ արդարեւ աղքատ է քաղաքացի տղուն պէս. բայց նոյնքան զըրկանաց ենթակայ չ'ապրիր. նոյն իսկ եթէ ուտեստը հիւթալից չըլլայ, բնութիւնը անոր կը պարգեւէ առատ ու մաքուր օդ, անապակ ջուր, ընդարձակ դաշտեր, որոնք փոխարինութիւն մը կ'ըլլան՝ ուտեստի մասին իր կրած զրկանաց, եւ ինք կ'աճի զօրեղ ու կորովի. եւ յետոյ, դաշտային աշխատութեանց մէջ կը դառնայ տոկուն մարդ:

Այսպէս, մինչդեռ քաղաքացի տղան տկար ու փափկամարմին է, գիւղացի տղան կորովի ու կայտառ կ'ըլլայ. ուստի մարմնամարզին կազդուրիչ պաշտօնը իրաւամբ նկատելու ենք իբր երկրորդական՝ գիւղերու մէջ. ի՞նչ է, ուրեմն, այդ տեղեր մարմնամարզին էական, նախնական դերը:

Գիւղերու մէջ տղան թէեւ կորովի է, բայց բիրտ է, դանդաղ է. կրնայ, զոր օրինակ, ծանր բեռ մը վերցնել, բայց չի կրնար փոսէ մը անդին ցատքել. կրնայ ծառ մը տապալել կացինի հարուածներով, բայց չի կրնար այդ ծառն ի վեր մագլցիլ. ճարպիկութիւն, գիւրաթեքութիւն կը պակսի իրեն. եւ մարմնամարզին գլխաւոր պաշտօնը ըլլալու է այդ բանը տալ գիւղացի տղուն:

Մանչերու վարժարանաց մէջ, եթէ ոչ ամէն տեղ արդեամբ, գէթ անուանական կերպով ընդունուած է մարմնամարզը, բայց աղջկանց վարժարաններու մէջ ամօթ կը համարուի այդ կրթութիւնը. նոյն իսկ աղջիկներն ու ծնողք, իրենք ալ, ամօթ կը համարին զայն դժբախտարար:

Բայց աղջիկները մանչերէն աւելի պէտք ունին մարմնամարզի. մանչերը՝ որչափ

ալ աղքատ ըլլան՝ դարձեալ իրենց վիճակին զրկանքները կը փոխարինեն խաղերով ու պտոյտներով զորս կը կատարեն փողոցներու մէջ. բայց աղջիկները փակեալ կը մնան տան մէջ, հազիւ երբեմն կատարելով մարմնական աշխատանք. Գաղաքացի աղջիկներու համար մանաւանդ պէտք է մարմնամարզը, այն աղջկանց որոնցմէ մին՝ քաղաքակրթութեան տենդէ բռնուած՝ օր մը հասարակաց զբօսավայրի մը մէջ կը գանգատէր իր մօրը թէ բաւական բարակ չէ մէջքը. — Ալ ի՞նչ պիտի ըլլայ, ատկէ աւելի բարակ մէջք, կ'ըսէր մայրը, ուշադրութիւնը հրաւիրելով իր քով նստող կիներէն մէկուն ու ջանալով անոր վկայութեամբը մխիթարել իր աղջիկը. Վիճակի աննպաստ պայմանաց երբ միացնենք այն յիմարական փափաքները որոնցմէ վարեալ՝ այսպէս կը հիւժեն քաղաքացի աղջիկները իրենց կազմութիւնը, երբ աչքի առաջ բերենք ջլախտաւոր, անարիւն ու թուլամորթ վիճակը մեր քաղաքացի աղջկանց, այն ատեն միայն կրնանք ըմբռնել թէ որ աստիճան կարեւոր է մարմնամարզը մեր ապագայ մայրերուն:

Բարձրագոյն վարժարաններու մէջ, ուր գործիքով մարմնամարզն ալ կ'ուսուցուի, յատուկ դասատուի պէտք կայ արդարեւ, քանի որ մասնաւոր ճարտարութիւն ու ճապուկութիւն կը պահանջուի: Բայց նախակրթարանաց, մանաւանդ Տարրական նախակրթարանաց մէջ, ուր առանց գործիքի մարմնամարզը միայն կ'ուսուցուի, պէտք չկայ մասնաւոր դասատուի. մնայուն ուսուցիչք պարտաւոր են ստանձնել այդ դասերը: Անոնք՝ առաջնորդող գրքի մը օգնութեամբ, շատ դիւրութեամբ կըրնան կատարել տալ աշակերտաց մարմնակրթական վարժութիւններ, նոյն իսկ եթէ յառաջագոյն մասնաւոր ուսում կամ կրթութիւն ստացած չըլլան իրենք այս ճիւղին մէջ, կը բաւէ որ՝ դասէն առաջ՝ անգամ մը անդրադառնան այն հրահանգաց վրայ զորս կատարել պիտի տան: Բայց որպէս զի այդ դասերը ընծայեն ի-

րենց բովանդակ օգուտը, երկու գլխաւոր պայմաններ անհրաժեշտ են:

Ա. Մարմնամարզանք մարտողութեան շրանալին ետքը պէտք է կատարուին, այսինքն ճաշէն երկու ժամ ետքը: Սխալ է կարծել թէ աշխատութիւնը կը դիւրացնէ մարտողութիւնը. ընդհակառակը, որպէս զի կերակուրը դիւրաւ մարսուին, մարմնոյ կազմուածքը պէտք ունի, եթէ ոչ կատարեալ հանգստի, գէթ հանգարտութեան. երբ մարտողութիւնը՝ չյարդուելով՝ կ'ընդհատուի յաճախ, տղան՝ փոխանակ Փիգիքապէս օգտուելու՝ կը տառապի, նոյն իսկ կը վնասուի. դժուարամարտութիւն եւ ջղային ցաւեր կ'ունենայ:

Բ. Մարզանքները՝ ըստ սեռակի եւ սեռողութեան՝ համեմատական ըրշաշու եւն շղոց հասակին: Դիտենք թէ մարդկային մարմինը, մանկութեան մէջ, մինչեւ տասներկու տարեկան, ի լինելութեան է դեռ. ոսկորները իրենց վերջնական կազմութիւնը չեն ստացած, յօդակապերն ու ձգանքները կատարեալ ամրութեամբ տակաւին չեն պնդուած, մկանունք թոյլ են եւ տկար: Ուստի այն վարժութիւնները, որոնք կրնան յարմարիլ տասներկու տարեկանէն վեր եղողներու, չեն յարմարիր բոլորովին այդ տարիքէն վար եղող տղոց. եւ դարձեալ, կրնանք մեծերը երեք քառորդ կամ մէկ ժամ զբաղեցնել մարմնակրթանքով, առանց տեւական յօգնութիւն մը պատճառելու իրենց. մինչդեռ փոքրերուն համար, այդչափ ժամանակի զբաղում մը ուժասպառ պիտի ընէր զանոնք ու վնասակար պիտի դառնար աւանց: Հետեւաբար, ուսուցիչը պարտաւոր է, մարմնամարզի ատեն, միշտ աչքի առաջ ունենալ իր սաներուն տարիքը, կամ, աւելի ճիշդ, անոնց կազմական վիճակը, եւ ըստ այնմ ընտրել իր հրահանգները, ու ըստ այնմ երկարել կամ կարճել զանոնք:

Ուսուցիչը լաւ բան մը ըրած կ'ըլլայ նմանապէս եթէ, մէն մի վարժութեան առթիւ, բացատրէ անոր բնախօսական արդիւնքն ու օգուտը. այդ բացատրու-

թիւնը լսելէն ետք, տղան մեքենայի մը պէս, անգիտակից կերպով, չի կատարեր մարմնակրթական վարժութիւնները, այլ համոզմամբ, իր ըրածին գիտակցութիւնն ունենալով եւ, ըստ պահանջման, փոփոխելով զանոնք ուղածին պէս:

Մարմնամարզէն անցնելով խաղին, երկու տեսակէտով կարեւոր կը համարինք զայն:

Նախ՝ որպէս զի գոհացում գտնէ մանկան գործունէութիւնը որ կարծես դուրս կը գեղու իրմէ, եւ որպէս զի ստանայ մարմնական ոյժ, ճապուկութիւն եւ կորով:

Երկրորդ՝ որպէս զի իր մտաւոր կարողութիւնները տարբեր ուղղութեամբ մը գործելով հանգիստ վայելեն, եւ վերըստին ստանան այն ոյժը զոր դասերու պատրաստութեամբ կամ ունկնդրութեամբ սպառած էին: Ո՛ր եւ է ստացում, ո՛ր եւ է տպաւորութիւն՝ զոր կ'ընդունի տղուն միտքը դասաժամուն՝ կ'սպառէ ոյժ անոր ուղեղէն, ճիշդ ինչպէս ելեկտրաշարժ մեքենայ մը կ'սպառէ ելեկտրական հոսանքի մէկ մաս մը ծնուցիչ գործիքէն:

Բաց աստի, խաղը հայելի մը կ'ըլլայ տղուն բնաւորութեան. ամէն տեղ կրնայ ծածկամիտ կամ կեղծաւոր ըլլալ տղան, բայց խաղին մէջ անքօղ կը յայտնէ ինքզինքը:

Ուրեմն, բնաւորութեանց ուսումնասիրութեան տեսակէտով ալ, որ նուազ կարեւոր չէ միւսներէն՝ պատուական աղբիւր մըն է խաղը ուսուցչին համար, պայմանաւ որ խաղի միջոցին տղոց մէջ ըլլայ ուսուցիչը, եւ նոյն իսկ մասնակցի երբեմն անոնց խաղին:

Այստեղ ի դէպ է դիտել տալ թէ մեր վարժարանաց մէջ, տղաք շատ քիչ խաղ գիտեն, գրեթէ չգիտեն. աւանդական մի քանի խաղեր են զորս ընդհանրապէս կը խաղան՝ աւելի կամ նուազ փոփոխելով տեղէ տեղ. կան տեղեր ալ ուր խաղ ըսելով ուրիշ բան չեն հասկնար բայց եթէ ասդին անդին վազել խառն ի խուռն, իրարու բաղխելով, զիրար հրելով եւ կամ իրարու զարնել ջանալով:

Խաղը, երբ խելացի կերպով կազմուած է, ոչ միայն հաճոյալի մարմնակրթանք մը կ'ըլլայ տղոց, այլ եւ հրապուրիչ մոտամարզանք մը. այսպիսի խաղեր ուսուցիչք կրնան գտնել եւրոպական լեզուներով հրատարակուած յատուկ ձեռնարկներու մէջ⁽¹⁾։ Խաղէ կամ զբօսանքէ զրկուած, իբր մարմնական պատիժ, չափաւորութեամբ գործածելու է միշտ։

Փոխադարձաբար փափաքելի էր որ մեր դպրոցներուն մէջ մրցանակներ հաստատուէին, յատուկ մրցանակներ, մարմնական ուժի եւ ճարտարութեան փորձերու համար, ինչպէս մասնաւորապէս հաստատուած են անգլիական դպրոցներու մէջ։ Դպրոցի վարիչք ինչ բանի որ կարեւորութիւն տան, աշակերտք անտարբեր չեն մնար այն բանին։

Ամէն ուսուցիչ կեանքին մէջ գոնէ անգամ մը դիտած ըլլալու է այն աճապարանքը որով՝ ճաշի ժամուն՝ կը լարտեն իրենց կերակուրը մեր դպրոցականք. պատառը դեռ իրենց բերանը, մաս մը բան ի ձեռին ունենալով, մաս մըն ալ սակաւին մէջ թողած՝ կը վազեն զբօսանքի։ Արդէն շատ անգամ՝ չոր ու ցամաք կերակուր մըն է այն զոր ունին իրենց սակաւին կամ ծրարին մէջ. զայն ալ չեն ուտեր պատշաճօրէն, լաւ մը ծամելով կամաց կամաց։

Եթէ քիչ մը գորով ունինք մեր սաներուն վրայ, եթէ գոնէ մասամբ կ'ըմբռնենք մեր պարտականութիւնը, պարտաւոր ենք անխոյժ չմնալ անոնց այս վարմունքին առջեւ. պէտք է հսկենք անոնց վրայ, խրատենք, համոզենք զիրենք համակերպիլ այն ուղղակիկ պայմանաց որոնցմով կերակուր մը կրնայ օգտակար ըլլալ մեզի։

Դպրոցական բարեգործութիւններ բաւական ընդհանրացած են մեր մէջ. դըպրոցական պիտոյք, զգեստ հայթայթող

խնամակալութիւններ կան արդարեւ։ Ո՛րչափ փափաքելի էր որ գտնուէին խնամակալութիւններ ալ որոնք ստանձնէին՝ ինչպէս կ'ընեն ուրիշ տեղեր՝ ամրան արձակուրդին գիւղագնացութեան զրկել աղքատիկ, վատոյժ տղաքներ. մեծ ծախքի ալ պէտք չկայ այս բանը ընելու համար. տղաք նշանակելի արդիւնքներ քաղած են այս գիւղագնացութիւններէն. վերադարձած են ծանրութեամբ աւելցած, մարմնապէս աճած զօրացած, վարդազոյն լեցուն այտերով։ Օգտափութութիւնը փրկութիւն մը չէ՞ այս շիջեւամերձ կեանքերուն համար, ճշմարիտ փրկութիւն մը մասնուկին թէ՛ Ֆիզիքական եւ թէ՛ բարոյական կենացը համար։ Առանց այդ կենսանորոգ սատարին, թերեւս պիտի ընկճուէր, թերեւս յուսահատութեան պիտի մատնուէր կամ մարէր։

Արդ, մտաւոր աշխատութեան չափաւորում, մարմնամարզի պատշաճօրէն կիրառում, օգտակար հաճոյալի խաղերու սարքում, եւ չքաւոր տղոց համար գիւղագնացութիւն, ահա՛ հիմերն այն կարգ կանոնին որուն պէտք է հետեւի դպրոցը՝ աշակերտաց առողջապահութեանը հետ անոնց ֆիզիքական զարգացման եւս օժանդակելու համար ըստ կարելոյն։

Գ. Ա. ՄԱՍՏԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՅ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Մեր նախակրթարանաց այժմու ուսուցիչք գիտնաբար պատրաստուած չեն իրենց պաշտօնին, այս յայտնի է, եւ այդ է անշուշտ մեր տոհմային կրթութեան մեծագոյն պակասը։ Վարժապետանոց չունիմք, ոչ իսկ աստ եւ անդ մանկավարժական դասընթացքներ։ Երբեմն գաւառի մը մէջ «վարժապետանոց» անունով դպրոց մը գոյութիւն ունեցաւ, եւ Մայրաքաղաքի մէջ ալ ունինք աղջկանց վարժարան մը որոյ հիմնարկութեան յայտ-

(1) Կը խնդրենք գաւառացի մեր պաշտօնակիցներէն որ հաղորդեն մեզ տեղացի տղոց սովորական խաղերու կարգն ու սարքը։ Կը փափաքինք ընտրանք բաղուածք մ'ընել անոնցմէ ու ներկայացնել մեր ընթերցողաց։

նի նպատակն է վարժուհիներ պատրաստել, բայց ուր որ վարժապետացու աշակերտաց մի միայն ուսմունք կ'աւանդուին ինչպէս ամէն այլ վարժարանաց մէջ՝ հոն չէ կարելի անշուշտ վարժապետանոց մը տեսնել, այս հաշուով ամէն դպրոց ալ կրնար նոյն տիտղոսին յաւակնիլ: Վարժապետանոց մը, բաց ի այն ուսումններէն որք ապագայ վարժապետին մտաւոր պաշարը ճոխացնելու կը ծառայեն, պարտի նաեւ, եւ իբրեւ իր յատուկ պարտականութիւնը, աւանդել ուսուցանելու, դաստիարակելու արուեստը: Հոգեբանութիւն, բարոյագիտութիւն, դաստիարակութեան գիտութիւն, մեթոտաբանութիւն, դպրոցական վարչագիտութիւն էական տարերքը պարտին լինիլ մի այդպիսի հաստատութեան ծրագրի:

Այս պակասը լեցնելու համար մեր մէջ ոմանք լրագիրներու միջոցաւ կարծիք կը յայտնեն թէ հարկ է դրամ գտնել ու եւրոպական մանկավարժանոցները յղել այն պատանիները որք կը յօժարին դաստարակ-ուսուցչի պաշտօն ստանձնել մեր նախակրթարանաց մէջ: Առ այս այդօրինակ մանկավարժանոցներու ծրագիրն եւ ընդունելութեան պայմաններն ալ կը հրատարակեն, որպէս վերջերս տեսնուեցաւ Նանսիի վարժապետանոցին ծրագիրը:

Այս միջոցը կը բաւէ՞ կամ ա՞յս է որ պիտի ծառայէ լրացնելու մեր մէջ այն մեծ պակասը որոյ վրայ կը խօսինք:

Կարծեմք թէ ոչ, Նախ եւ յառաջ՝ մեր նախակրթարանաց համար հարիւրաւոր ուսուցչաց եւ հարիւրաւոր ուսուցչուհեաց պէտք ունիմք. ի՞նչպէս կարելի է զանոնք ամէնքն ալ պատրաստել Եւրոպիոյ մէջ, Յետոյ, ինչ որ աւելին է, օտար մանկավարժանոցներու մէջ, որ կազմուած են օտարազգի մանուկներու դաստիարակ պատրաստելու համար, կարելի՞ է միթէ որ մեր մանկութեան ապագայ դաստիարակներն ստանան լիովին այն կրթութիւնը որով կարող ըլլան յետոյ օգտակար դառնալ մեր նախակրթարանաց մէջ: Հոն պիտի վարժին տարբեր

լեզուով, տարբեր երկրի պէտքերուն տեսակէտով, տարբեր ազգի մանուկներու վրայ իրենց փորձերը կատարելով: Գիտեմք որ դաստիարակութիւնը թէ եւ ընդհանուր՝ մարդկային հիմեր ունի, բայց նաեւ կը զանազանի ու պարտի զանազանիլ իւրաքանչիւր ազգի ու երկրի տեսակէտով: Վերացեալ մանուկը չէ՞ որ պիտի պատրաստուի վերացեալ մարդ մը, այլ այս ինչ ազգին ու երկրին վերաբերող մանուկը՝ ապրելու նոյն ազգին ու երկրին գիրկը, այդ ընկերային ու աշխարհագրական միջավայրին մէջ, Հետեւապէս առաջին վայրկեանէն այդ ընդհանուր ու մասնաւոր, մարդկային ու տոհմային տեսակէտներն յիրար պիտի ձուլուին առաջնորդելու համար սանին զարգացման, հետեւապէս եւ ապագայ դաստիարակն իր պաշտօնին պիտի պատրաստուի ուսումնասիրելով զայն այդ երկրին միաձոյլ ուղղութեամբ:

Չեմք ըսեր անշուշտ թէ ո՛ր եւ է ապագայ դաստիարակի համար գլխովին անօգուտ կը մնան օտար վարժապետանոցի մը մէջ անցուցուած երկու երեք տարիները, բայց դեռ իրեն ի դարձին շատ բան պիտի մնայ սովորելու մեր տղուն, մեր լեզուին, մեր ընկերութեան, մեր դպրոցական գործոց ու բարուց, մեր բնական երկրին նկատմամբ: Սովորածներէն շատ բան ալ փոխելու, բարեփոխելու պիտի ստիպուի, եթէ երբեք բաւական ուղիմութիւն ու ճկունութիւն ունենայ ինքնին խելամտելու համար մշակելի դաշտին առանձին հանգամանաց ու անոնց համակերպելու: Օտարազգի մանկավարժանոց մը մտնելու համար կը պահանջուի մտից քննութիւն մ'օտար լեզուով, եւ այդ ի հարկէ հայ ուսանող-վարժապետացուն համար կ'ենթադրէ արդէն բաւական զարգացում մը, զոր, կրնանք ըսել, մեր մէջ երկրորդական դպրոցէ ելնող մը կրնայ ստացած ըլլալ: Երկրորդական կրթութիւն ստացող մը թերեւս նախնական մանկավարժանոցի մ'ընդհանուր ծրագիրը անբաւական գտնէ իրեն համար եւ աւելի բարձրագոյն կրթութեան ձգտի: Յետոյ պէտք

է երեւակայել որ տարիներով եւրոպա-
դեգերողներ բաւական անյուշակնութեամբ
տի գտնուին յօժարելու համար յանձն
առնուել դաստիարակ-ուսուցչի պաշտօն մը
մեր քաղաքային ու գիւղային տարրական
նախակրթարանաց մէջ, առ առուելն մի
քանի հարիւր զրուշի փոխարէն:

Այս ամէնը կը ցուցնէ որ այս տեսակ
խորհուրդներ երազային են: Նախակրթա-
րանաց ուսուցիչք կրթական համեստ
պաշտօնեայններ են ու պարտին ըլլալ ի-
րենցմէ շատ գիտնալ չի պահանջուիր.
մասնագէտ ուսուցիչներ չեն. միայն ի-
րենց գիտցած քիչը պէտք է որ լաւ գիտ-
նան, միշտ աւելին ունենալու եւ զարգա-
նալու փափաքն ունենալով, եւ նա մանա-
ւանդ իրենց գիտցածը լաւ սովորեցնել կա-
րողանան, մանկավարժական սկզբունքներ
ունենան, տղուն հոգին ճանչնան, անոր
մտքին ու սրտին հասնելու ճամբայնե-
րուն տեղեակ ըլլան, սիրեն մանուկն ու
իրենց պաշտօնին վեհութիւնն ըմբռնեն:
Այս յատկութիւնները, բնական կոչում
ենթադրելով հանդերձ, հարկաւ կը պա-
հանջեն առանձին ուսում ու պատրաստու-
թիւն որք սակայն, ինչպէս վերեւ ցուցինք,
օտար միջավայրներու մէջ չեն կրնար ձեռք
բերուիլ: Ոչ մէկ ազգ տուած է ցարդ իր
նախակրթարանաց ուսուցիչները արտա-
սահմանի մէջ պատրաստելու օրինակը.
այդ ուսուցիչներէն մինչեւ իսկ օտար լեզ-
ուի մը հմտութիւնը չի կրնար պահանջ-
ուիլ:

Ինչ պէտք է ընել ուրեմն. — Ահաւա-
սիկ: Մանկավարժական սկզբունքներ ըստ
բաւականին մուտ գտած են մեր մէջ. Մա-
սիսի նման թերթեր զանոնք կը ծաւալեն,
անոնց կիրառութիւնը կ'ընեն մեր կրթու-
թեան պէտքերուն, ամէն ուսուցչաց հը-
պելի կ'ընեն զանոնք: Դաստիարակութեան
գիտութեան ու արուեստին վրայ ճառող
նշանաւոր երկեր կը թարգմանուին ու կը
հրատարակուին աժանագին, մեր գաղա-
փարաց եւ ունակութեանց պահանջած
մեկնութիւններովն լուսաբանուած: Առ
այժմ գէթ ի Պոլիս կը հաստատուին երկու
մանկավարժանոց, մին արական եւ միւսն

իգական սեռի համար՝ անոնց ծրագիրն
կազմելով մասամբ հետեւողութեամբ եւ-
րոպական նմանօրինակ հաստատութեանց
ծրագրաց, այլ նա մանաւանդ պատշա-
ճեցնելով մեր յատուկ պիտոյից, անոնց
մէջ դասախօսել կոչելով հիմակու հիմայ
մեր ունեցած ուսուցիչներէն ամենէն
ձեռնհասները որք հիմ կը դնեն հայ ման-
կավարժութեան: Այդ դպրոցներէն ել-
նող լաւագոյններն կամ ուրիշ յարմարա-
գոյններ կը շրջուին յեւրոպա, ո'չ թէ
նախնական մանկավարժանոցներ (*) մըտ-
նելու՝ այլ քսրճարգոյնները (**) որք նախ-
նականաց ուսուցիչ կը պատրաստեն, ո-
րոնք՝ կասաբլազործուելով՝ կուգան հետ
զհետէ, մէկ կողմէն Պոլսոյ վարժապե-
տանոցներուն մէջ աւելի ձեռնհասու-
թեամբ դասախօսելու եւ սկսուած գործը
զարգացնելու, եւ միւս կողմէն գաւառա-
կան մէկ երկու կարեւոր կեդրոններու
մէջ նոր վարժապետանոցներ ու մանկա-
վարժական դասընթացքներ (cours péda-
gogiques) հիմնելու: Միեւնոյն ատեն կեդ-
րոնը, ինչպէս կանոնադրած է ընել, ու-
սուցչական վկայագիր տալու համար՝ ու-
սուցանելիք առարկայից հմտութենէն զատ
մանկավարժական սկզբանց ու եղանակաց
ալ կ'սկսի հմտութիւն պահանջել ընտրե-
լիներէ, աստիճանաբար իր պահանջկոտու-
թիւնը յաւելցնելով, պահանջ մ'որոշն
կրնան ուսուցչական ընտրելիք կամ արդի
ուսուցիչք եւս այժմէն գոհացում տալ
սկսիլ, քանի որ քիչ շատ կան ու հետ
զհետէ ալ պիտի աճին միջոցներն հմտա-
նալու դաստիարակութեան տեսականին:
Ահա այս կերպով, կը կարծեմք, կրնայ
կարելի ըլլալ աստիճանական բարեշրջումն
մեր տոհմային դաստիարակութեան, տա-
կաւ բարձրացումն մեր արդի ուսուցչա-

(*) Ecole normale primaire, որպէս է Նան-
սիինը եւ Դալիոյ այլ գաւառացի:

(**) Ecole normale supérieure, որպէս միայն
երկու հաս ունի Դալիա, մին ի Ֆոնդընէյ-օ-Բոզ
եւ միւսն ի Սէն-Դիլ, առաջինը դաստիարակ-վար-
ժուհեաց եւ երկրորդը դաստիարակ-ուսուցչաց վար-
ժապետանոցներու ուսուցիչներ պատրաստելու նը-
պատակաւ հիմնուած:

կան մարմնոյն, պատրաստութիւնն կրթական գործին նոր ու կարողագոյն մշակաց, եւ կազմակերպումն մի տոհմային մանկավարժական գիտութեան, իր պատմութեան, տեսականին եւ գործնականին մէջ:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՈՒՍՈՒՄԸ

ՆԱԽԱԳԹԱՐԱՆԱՅ ՄԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹԻՒՆ

Նախնական կրթութեան կազմական կանոնագիրը տարրական նախակրթարանաց ուսմանց ընդհանուր յայտագրին մէջ նշանակած է «Սկզբունք գրաբար հայերէնի»։ Ըսել է որ գրաբարի տարրական ծանօթութիւն մը պէտք է աւանդուի մեր ամենէն յետին դպրոցաց մէջ ալ, եւ այս անշուշտ առանց պատճառի չէ։

Ինչ որ ալ ըսուի, գրաբարը մեզի համար բոլորովին մեռեալ լեզու մը չի կրնար համարուիլ։ Ամէն օր մեր եկեղեցեաց մէջ մեր ականջին կը զարնէ այն. անով կը լինին սուրբ գրոց ընթերցմունք տաճարաց մէջ, անով կը կատարուին եկեղեցական պաշտամունք։ Արդ, եթէ կ'ուզենք որ ժողովուրդը անտարբեր չմնայ այդ կարգացուած բաներուն եւ իր հոգւով համակրի երգուած երգոց եւ աղօթից, ինչ որ գիտակից բարեպաշտութեան մ'առաջին պայմանն է, պէտք է որ քիչ շատ տեղեակ ընենք ամէն դպրոցէ ելնող այդ սրբազան լեզուին։ Մենք գիտարար կըրնանք երեւակայել աշխարհարարը եկեղեցական լեզու եղած, մեր շարականներն ու նուիրական մատենաքը աշխարհիկ լեզուաւ երգուած ու կարգացուած եկեղեցւոյ մէջ։ Ապահով եղիք որ անոնք իրենց սրբութենէն, իրենց վեհութենէն բան մը պիտի կորսնցնէին մեզ համար, եւ ամէն

պարագայի մէջ՝ մեր հարց եկեղեցին չպիտի ճանչէինք անոնց մէջ։ Հոգեկան կապի մը, որով կապուած կ'զգամք այժմ զմեզ մեր սրբավայրաց մէջ՝ մեր նախնեաց հոգիներուն հետ, խզուիլը պիտի զգայինք մեր մէջ։ Եւ եթէ եկեղեցական լեզուն ուսման կարգով պէտքը զգալի չեղաւ նոյն իսկ այնպիսի ժամանակներու մէջ ուր աշխարհաբար քարոզներն ալ գրաբար կը կարծուէին, հիմայ եւ յետ այսորիկ որ կրթութիւնը կը զարգանայ ու պիտի զարգանայ տակաւ մեր մէջ՝ այդ պէտքը եւս աւելի անզգալի պարտի դառնալ, վասն զի հասկացողներու թիւը ո՛չ թէ պիտի պակսի, այլ ընդհակառակն։

Գրաբարը բոլորովին մեռեալ լեզու մը չի կրնար համարուիլ, դարձեալ անոր համար որ գործօն դեր մը կը կատարէ միշտ աշխարհաբար գրաւորին մէջ։ Թէ եւ աշխարհաբարն ունի իր հոլովմանց եւ խոնարհմանց յատուկ ու սովորական կերպերը, բայց ո՞վ չգիտեր թէ գրաբար հոլովմունք ու խոնարհմունք եւս կրնան ու կրցած են միշտ ի ճահ գործածուիլ աշխարհաբար գրուածոց մէջ, — եւ պէտք է գիտել թէ այս երկու բանը (հոլովումն ու խոնարհումը) էական մասունքն են լեզուի մը դիմագծութեան։

Բանանք Հաւաքածոյ մ'աշխարհիկ ընթերցուածոց. ահա՛ ըստ բախտի պարբերութիւն մը Գ. Վ. Սրուանձտեանցէ։

Երկիրը տեղ տեղ անմշակ՝ այլ խոռաւէս, որոց մէջ բազմութիւն ձիւց խորոյս կը խնայեն եւ եզիմք ծանր կը բառաչեն արածելով։

Դարձնենք. Թաղառական Հրեայէն է, Կ. Ս. Իւթիւճեանի թարգմանութիւն։

«Յօնքը բարակ, կամարածն եւ քաջաճուխ է՝ իր երկայն արեւաճաճ պէս որք իր լերկ այտերուն վրայ ստուեր կը ձգեն, քոսորագոյն երբուցք՝ թեթեւ կերպով կիսաբաց՝ ճնշեալ շունչ մը դուրս կուտան»։

Դարձնենք. Ե. Տէմիրճիպաշեանն է որ կը գրէ։

«Ամենէն հսկայ լեռնիք Արեւելից մէջ կը բարձրանան, ամենէն լայնասար եւ արգաւանդ դաւաճաւք Արեւելից մէջ կը տարածուին ու կը պսղաբերին ամենէն ականաւոր գոհարներ Արեւելեան հողոյն ներքեւ կը բախչին. ամենէն ականապարսր բոյսեր Արեւելեան արփւոյն ներքեւ կը փթթին»։

ամենէն ճիշտն մարդիկ եւ ամենէն ճիշտն կենդանիք Արեւելից են որդիք : »

Դարձնենք. « Դրախտի ընտանիքէն առնուած հատուածի մը մէջ կը կարգանք .

« Քանզի հայր ու մայր անուամբ նախասկիզբն արմատ են այլ ամէն անուամբ : Իշխան, ժողովուրդ, ազգ՝ հայր ու մայր անուամբ ծնողական շառաւիղներն են որ նոյն միացեալ արմատէն եւ երկնիցի ընէն կը բուսնին եւ կը սփռին աշխարհիս վրայ : »

Դարձնենք. Յուշիկներու հեղինակն է որ կը խօսի .

« Թէպէտ եւ զանազան են հասակի եւ վիճակի, այլ ամէնքն ալ բոս չափու եւ բոս վիճակի իւրեանց՝ պարտական են երկնից : »

Դարձնենք. ահա՛ Օտեան կը գրէ .

« Հազիւ հազ այս մէկ քանի ամսուան մէջ երբեմն կը ցուրտն մառախուղէ, եւ քոյլ կուտան նրբուլիցն արեգական փայլելէ Լոնսոնի մշտականաջ մարմանդներուն վրայ . . . »

« Հացկերոյք ու երեկոյք իրարու՝ կը յաջորդեն ու ցերեկներն ալ պարտէզներու մէջ կը տարուցակին թոփ ու հանդէպ : »

Եւ այլուր .

« Ո՞չ ապաքէն ամենայն ինչ կ'աղօթէ յարսիս . . . եւ միայն մարդս պիտի չաղօթէ, մարդս՝ որոյ վրայ կը խուժեն ալէս, որ բոլոր քնուծեան մէջ անժառանգեալ՝ ինքն է միայն որոյ միսիժարուծիւնը, յոյսն ու մեծութիւնն է խօսիլ ընդ Աստուծոյ : »

Դարձնենք. Մայրաքաղաքի հեղինակուհին կը շարժէ իր գրիչը .

« Մերք ընդ մերք վանկ մի կը լսուի, ուրիշ մի կը պատասխանէ առաջնոյն, եւ յանկարծ երաժշտական ամբողջութիւն մի կը կազմուի : Ի՞նչ կը խօսին քուչուկս.՝ քիչ կ'ուզեն : Կը համայնեն արդիօք իբրեւ զմեզ վիշտն ու հրճուանքը, կը ծանաչեն ծնողաց սրտին ցուրը, կը ծանաչեն կենաց պատանքը, կ'ողբան սիրեցեալ բացակայի վրայ, կուլան կը հիւծին անհնարին բաղձանքներով : »

Այսօրուան Հայրենիքն ալ աչքիս առջեւն է, որուն մէջ կը կարդամ .

« Վերջերս սաստիկ կուլ մ'ունեցաւ Ռոպէրդ Պըշանան անուամբ թատերագրի մը եւ թատերապետի մը հետ՝ յիշեալին «բարձր դասու թիթեռնիկ մը» վերնագրով մէկ նոր խաղին նկատմամբ : Քննադատը Ռ. Պըշանանի խաղը իրաւամբ դստովելէ ետքը եւլն : »

Այս բոլոր օրինակները, զորս կրնայի ըստ հաճոյս չափցնել, ցոյց կուտան որ գրաբարը միշտ աշխարհաբարին մէջ է, անոր մէջ կ'ապրի, նոյն իսկ իր հոլովում-

ներով ու խոնարհումներով որ լեզուի մը կենդանութեան ջղերն են : Հ. Արսէն Այտընեան իր Աշխարհաբարի քերականութեան մէջ (Կան. 39) կը գրէ . « Անուններէն շատերը գրաբարի նման ալ կրնան հոլովուիլ : » Ուր բայական վերջաւորութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ գրաբարի մէջ զատ լծորդութիւն մը կը կազմէ, « որուն այլ եւ այլ բայերուն կանոնաւոր ժամանակները (աներեւոյթը, սահմանական եւ ստորադասական ներկայներն ու անկատարներն) կրնան համարձակ գործածուիլ արդի լեզուին մէջ . ինչպէս՝ զենուշ, կը զենու, քոյ զենու, կը հեղու, եւն . — նոյնն իմացիր նաեւ շատ մը գրաբար բայերու համար որ եկամուտ գիր ունին, ինչպէս՝ բեկանեղ, արկանեղ, շուծանեղ, յառնեղ, եւն : » Գրաբարի նախդիրներն ու ոճերն եւս շատ անգամ կը գործածուին աշխարհաբարի մէջ, եւ գիտեմք որ ոտանաւորը ո՛ր աստիճան մեծ տեղ մը կուտայ գրաբարի ձեւերուն : Իսկ գրաբարի բառական միջերբը գրեթէ ամբողջութեամբ կրնայ մտնել ու գործածուիլ աշխարհաբարի մէջ, որու բառարանը ցարդ այսու փոխառութեամբ մանաւանդ ճոխացած է տակաւ : »

Գրաբարին ուսումնս ապա նոյն իսկ աշխարհաբարին տեսակէտով պէտք մը կը դառնայ : Կա՛մ այն է որ աշխարհաբարին քերականութեան մէջ պէտք է քիչ շատ ձուլուի գրաբարի քերականութիւնը, ինչպէս ըրած է Հ. Այտընեան, որ եւ զուտ գրաբարի քերականութեան յաւելուած մը կցած է իր գործոյն, կա՛մ այն է որ զուտ աշխարհաբար ձեւերու վրայ հիմնեալ քերականութիւն մ'անբաւական է հայերէնին ուսման եւ միշտ անհրաժեշտ պէտք մը պիտի ըլլայ ճանչցնել առանձին գրաբարի քերականութիւնը, գէթ իր ընդհանուր ձեւերուն մէջ :

Այս վերջինն է անշուշտ օգտակարը, որով ո՛չ միայն աշակերտը կ'ուսանի հասկընալ աշխարհաբար գրութեանց մէջ գործածուած գրաբարակերպ ձեւերն ու աստիճաններն ու անոնց օրէնքները գիտնալ եւ ինքն ալ իր կարգին կարող ըլլալ

գործածել, այլ եւ կարողութիւն կ'ստանայ հասկնալու պարզ գրաբար գրուածները, որք շատ անգամ միայն իրենց բառից քերականական վերջաւորութեամբն ու դասաւորութեամբ կը զանազանին իրենց աշխարհաբար թարգմանութենէն, — ինչ որ կը տեսնուի բաղդատելով, օրինակի համար, հետեւեալ տողերն իրենց մաքուր աշխարհաբար թարգմանութեան հետ.

Փաթար

Հողմավար կորնչիմ, մերկօրէն վառեն զիս
վիշաք.
կարօսիմ գերեզմանի, կոչեմ զօրհաս եւ խուլ
է ինձ.
Տառապիմ կողկողիմ, եւ ոչ զիսեմ զինչ զոր-
ծեցից...
(Յոբ)

Աւխարհաբար

Հողմավար կը կորնչիմ, վիշաք մերկօրէն կը
վառեն զիս.
Գերեզմանի կը կարօսիմ, օրհասը կը կոչեմ
եւ նա խուլ է ինձ.
Կը տառապիմ կողկողիմ, եւ չզիսեմ թէ
ինչ զործեմ...

Բայց պէտք է դիւրացնել տղայոց գրաբարի ուսումը, եւ ահա թէ ինչ պէտք է ընել առ այս:

Պէտք է նախ եւ յառաջ, ցարդ շատ տեղ եղածին հակառակ, բաժնել քերականական արուեստին ուսումը գրաբարին ուսումէն: Մեր մէջ ընդհանրապէս աշակերտը գրաբարին ուսման հետ երկու բան միանգամայն կը սովորի. մէյ մը բուն քերականութիւն ըստած բանը որ ընդհանուր բան մ'է, այն է բառից տեսակներուն, անոնց եղանակաւորմանց ու պաշտօններուն ուսումը, եւ յետոյ՝ գրաբարին յատուկ ձեւոց ու գործածութեանց ուսումը: Տղան միանգամայն կը սովորի, դեռ առաջին անգամ, թէ ինչ է գոյական, ածական, դերանուն, բայ, եւն. ինչ են ենթակայ, ստորոգելի, խնդիր, յատկացուցիչ, եւն. ու միեւնոյն ատեն թէ գրաբարի մէջ ինչ փոփոխումներ կը կրեն եւ համաձայնական ինչ կանոնաց ենթա-

կայ են անոնք: Այս կերպով երկու դժուարութիւն հիսուած ու կնճռուած են իրարու հետ, եւ աշակերտը ի վտանգի է ոչ մին եւ ոչ միւսը սովորելու. արդարեւ շատ անգամ ընդ երկար յեղյեղելէ յետոյ քերականական արուեստական բառերն ու գրաբարին հոլովներն ու խոնարհմունքն, կ'ենէն դպրոցէն ո'չ իսկ լաւ ըմբռնած գոյականին բնութիւնը կամ սեռի խնդրոյն դերը ընդհանրապէս: Ո՛չ. պէտք է դժուարութիւնները բաժնել. նախ աշխարհաբարով, տղուն արդէն գիտցած լեզուական ձեւերուն վրայ, պէտք է ուսուցանել իրեն դասակարգել բառերը իրենց բնութեան համեմատ, վերլուծել խօսք մ'իւր մասերուն եւ ըմբռնել անոնց առնչութիւնքն, շատ մը հրահանգներով որոց լեզուն հասկանալի եւ ծանօթ է իրեն, եւ որք լինին միեւնոյն ատեն մտածելու եւ բացատրելու մարզանքներ, բառագիտութեան ու ոճոյ կրթութիւններ: Յետոյ, երբոր ուսանողն արդէն գաղափար ունի լեզուի կազմական տարերց ու համադրական օրինաց վրայ, պէտք է՝ ծանօթէն անծանօթին երթալու օրինօք՝ ձեռնարկել գրաբարի ուսուցման, որ այլ եւս պիտի կայանայ մի՛ միայն գրաբարին յատուկ ձեւերուն եւ օրինաց ուսումնասիրութեան մէջ, ասոր հրահանգներն ալ յաւէտ քերականական նպատակ ունենալով քան մտամարդական. նոյն իսկ լեզուն բառական մթերքն մեծաւ մասամբ կրնայ աւանդուած ըլլալ ու շարունակել աւանդուել աշխարհաբարի կրթութեանց հետ: Այս մեթոտով աշխարհաբարին ուսումը պատրաստիչ, դիւրացուցիչ մը կ'ըլլայ գրաբարին ուսման, եւ գրաբարին ուսումն ալ աշխարհաբարի ուսման լրացուցիչ մը, պսակ մը, անտարակոյս դպրոցին աստիճանին չափով, տարրական նախակրթարանին մէջ գրաբարի սկզբանց միայն ծանօթութիւն մ'աւանդելով ու զարգացնելով զայն առ յապա բարձրագոյն նախակրթարանին ու երկրորդական վարժարանին մէջ: Գիտեմք որ գրաբարին ուսումը նաեւ սա օգուտն ունի որ անով կրնան բացատրուիլ ու հասկցուիլ իրենց

ծագման ու պատմական ընթացքին մէջ շատ մ'աշխարհիկ լեզուի ձեւեր ու գործածութիւններ:

Այս եզրակացութեան կը յանգի արդէն Հ. Արսէն Այստընեան ալ ու այսպիսի ուսուցման մը կուսանին վրայ կը տեսնէ կարելութիւնն միութեան կրկին հակառակորդ կողմանց, աշխարհաբարեանց ու գրաբարեանց, նոյն իսկ իւրաքանչիւր կողմն հաստատ մնալով իր սկզբանց վրայ ու իր շահու տեսակէտովը դատելով:

Համաձայնութիւնը շուտով կը գոյանայ, կը խորհի նա,

«1. Նկատելով աշխարհաբարն իբրեւ դիւրացուցիչ եւ իբրեւ առաջին աստիճան գրաբարի ելլելու. — որուն համար հարկ է նոյնն օրինօք աւանդել:

«2. Նկատելով գրաբարն իբրեւ էապէս հարկաւոր աշխարհաբարի կատարելութեանը. — որուն համար երբեք պակսեցնելու չէ գրաբարի ուսումը:

«Միայն այս կէտին վրայ, կը յաւելու, կը տեսնենք մենք մեր ներկայ եւ ապագայ ազգային գրականութեան պայծառութիւնը...»

Ռ. Յ. Պ.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

(Ընթացք երկրորդական վարժարանի)

1. Թէ ի՞նչ կը հասկնանք կենդանի ըսելով

Կենդանարանութիւնը բնական պատմութեան այն ճիւղն է որ կ'ուսումնասիրէ կենդանիները. բայց այդ գիտութիւնը սահմանելու համար հարկ է նախ սահմանել անոր առարկան, կենդանին:

Առ հասարակ ամէն մարդու գիտողութիւններն արդէն քիչ շատ կը բաւեն իրեն զանազանեւ տալու, զոր օրինակ, ձին ծառէն ու քարէն. ձին ինքնաբեր կը շարժի, կ'երթայ կուգայ, իսկ ծառն ու քարը՝ ոչ. ձին կ'զգայ, ծառն ու քարը՝ ոչ. միւս կողմէ՝ ձին ու ծառը կ'ապրին,

կեանք մ'ունին, իսկ քարը ոչ. ամէն մարդ գիտէ աս: Սակայն այս սահմանները տարտամ կը դառնան եւ չեն բաւեր երբ գիտական ուսումնասիրութիւն մ'ընելու, զենք. աւելի մանրամասն պէտք է գիտել էական զանազանիչ նկարագիրները:

Կեանք ունեցող կամ գործարանաւոր եւր կոչուած մարմինները կը տարբերին անկենդան կամ անգործարան կոչուած մարմիններէն, ոչ գիւրեւնք կազմող տարրերուն բնութեամբը, այլ անոնց մի այնպիսի կարգադրութեամբն ուսկից յառաջ եկած են յիշեցները⁽¹⁾, այսինքն գործարանաւորեալ էական նախնական մասունքն: Բջիջը սպիտակային համասեւ նիւթէ մը (նախանիւթ) շինուած մասնիկ մ'է որուն կեդրոնը կոչ⁽²⁾ մը կայ նախանիւթի կերպարանափոխութենէ յառաջ եկած: Բջիջ մը կրնայ առանձին անկախ ապրիլ, սակայն սովորաբար շատ մը բջիջներ իրարու քով գալով համերաշխաբար կը հիմնեն գործարանաւորեալ մարմինները որոնք այնչափ իրարմէ կը զանազանին իրենց բազմամասն գործարաններով: Գէթ մինչեւ հիմայ կատարուած փորձերուն վրայ հիմնուելով բջիջ մը չէ կարելի շինել, ծնուցանել տարրաբանական կամ բնագիտական ծանօթ զօրութիւններով: միշտ ուրիշ բջիջէ մը կը ծնի ան, կրնանք հետեւցնել ուրեմն թէ ապրող էակները իրենց նմաններէն միայն յառաջ կուգան:

Ասկից զատ այս վերջինք ունին որոշեալ եւ տեւական արտաքին կերպարան, որ կերպաբանական⁽³⁾ որոշ տիպարի մը կը համապատասխանէ եւ որ բնաւ նմանութիւն չունի հանքայիններուն բիւրեղի ձեւերուն հետ:

Ամէն ապրող էակ կ'ենթադրէ նաեւ գործունէութիւն, այսինքն սպառում, եւ սպառուածին տեղը լեցնելու համար դուրսի աշխարհէն փոխառութիւն: Քայքայման ու վերաշինման այս կրկնակ շարժումներն անոնց էական յատկութիւնն են: Բայց ասոնք չեն համազօր, երբ ապրող էակը կը ծնի, իր մէջ վերաշինման ոյժը գերազանց

(1) Cellule, (2) noyau, (3) morphologique.

էքայքայման ուժէն, եւ, ի շնորհս ատոր, այդ էակը զարգացմամբ կը դիմէ միջին կերպարաններէ դէպ ի վերջնականն յորում երկու զօրութիւնք կը հաւասարակշռին. անկից վերջ քայքայումը կը գերազանցէ եւ կը տիրէ վերջապէս միահեծան. այդ օրէն սկսեալ կեանքը դադարած է այլ եւս ապրող այդ էակին համար: Անգործարան մարմիններն ալ թէպէտ ծաւալնին կը մեծցնեն, կ'աճին նոր մասնիկներու յաւելմամբ, բայց գործարանաւորեալ էակաց իւրացման գործողութեամբ յաւելեալ մասնիկներուն կրած կերպարանափոխութիւնները տեղի չունին իրենց մէջ, եւ յետոյ՝ կ'աճին դուրսէն ներս, մինչ ապրող մարմին մը՝ ներսէն դուրս: Այսպէս ուրեմն գործարանաւորեալ էակ մը կը տարբերի անգործարանէն թէ իր ծննդեամբը, թէ իր ապրելու եղանակովը, թէ իր կազմութեամբը եւ թէ իր արտաքին ձեւովը:

Ինչ որ ըսուեցաւ մինչեւ ցարդ կը յարմարի կենդանիներուն ալ, բոյսերուն ալ. երկուքն ալ կեանք ունին, բայց ատկէ չի հետեւիր թէ չեն բնաւ տարբեր իրարմէ. արդէն վաղուց ի վեր մարդիկ զանազանած են Ռուսական թագաւորութիւնը կենդանականէն: Առաջին հայեցումաձեւով այդ բաժանումէն աւելի օրինաւոր բան չկայ. երբ բաղդատենք բարձրագոյն կարգի կենդանի մը բարձրագոյն կարգի բոյսի մը հետ, ի՞նչ մեծ անդունդ: Սակայն այդ անդունդին երկու եզերքները կը չիօթին իրարու հետ անոր խորը, սահմանները կը ջնջուին այնչափ որ շատ անգամ ամենէն վարժ կենդանաբան գիտունք իսկ կը շուարին կը մնան երբ ուզեն դասակարգել ամենէն ստորին գործարանաւորեալ էակները: Բայց վերջապէս միւս կողմէն ալ անհրաժեշտ է որ որոշիչ նկարագիրներ գտնենք որպէս զի կարենանք ուսնիլ այդ երկու թագաւորութիւնները (կենդանականն ու բուսականը): Բոյսերն ու կենդանիները նման են իրարու եւ տարբեր են իրարմէ իրենց յատկութիւններովը, եւ եթէ ցուցնենք

թէ ո՛ր կէտերուն մէջ ամենէն աւելի իրարմէ կը զանազանին, քիչ չափ որոշ սահմանագիծ մը քաշած պիտի ըլլանք երկուքին մէջ:

Քննենք ուրեմն համառօտիւ անոնց

1. Ընդհանուր յօրինուածը,
2. Ներքին կազմութիւնը,
3. Տարրաբանական բաղադրութիւնը,
4. Սննդաւորութեան եղանակները,
5. Շարժականութիւնն ու Զգայականութիւնը:

1. Ընդհանուր յօրինուած. — Կենդանին ունի զանազան կերպով կազմուած մասեր որոնք զանազան գործերու սահմանուած են. այդ տարբեր պաշտօններ ունեցող գործիներուն գործարան(1). կ'ըսեն. շատ մը գործարաններ երբ միեւնոյն պաշտօնին զանազան կողմերը կատարելու համար գործակցին՝ կազմած(2) անունը կ'առնուն. տեսէք մէկ մարսողութեան պաշտօնին համար բերանը, ստամոքսը, աղիքները, լեարդը, եւն. որ գործարաններ են, ինչպէս կ'աշխատակցին մարսողական կազմածն յօրինելու:

Բոյսը այսպէս կ'նձուտ գործարաններ չունի, ունեցածները բաղդատմամբ շատ աւելի պարզ են քան կենդանիներունը: Բայց բնաւ մտքէ չհանենք թէ այդ տարբերութիւնները զարգացած բոյսերուն եւ զարգացած կենդանիներուն մէջ կան միայն, որովհետեւ այս վերջիններէն կան այնպիսիներ որոնք իրենց պարզութեամբ կը մրցին ամենէն պարզ բոյսերուն հետ:

Կազմածներուն մէջ որոնք պարզութեամբ հանդերձ միշտ կան կենդանիներուն մէջ՝ ամենէն ընդհանուրն է մարսողական կազմածը որ ամենէն ստորին աստիճաններուն մէջ միայն կ'անհետանայ, բայց չկարծէք թէ անդեան պաշտօնն ալ կ'ոչընչանայ. ոչ, այլ սա կը պատահի որ փոխանակ որոշեալ մասերով կատարելու զայն, մարմնոյն ամէն մասերով ալ կըրնան ուտել այլ եւս: Բաւ է որ սնունդը մարմնոյն հալի, հոն փոս մը կը ձեւանայ,

(1) Organe, (2) appareil:

եզերքները կը ծածկուին, պատառն այսպէս մարմնոյն մէջ կը մտնէ, կը մնայ քիչ մ'ատեն, կը մարսուի ու անոր աւելորդները որ եւ իցէ կողմէ դուրս կ'եւնեն ինչպէս որ մտան:

2. Ներքին կազմութիւն. — Ըսինք թէ ապրող էակներուն կազմիչ մասնիկներուն բջիջ անունը կուտան, սակայն բուսական բջիջը զանազանելու է դարձեալ կենդանականէն: Կենդանեաց մէջ զանազան գործարաններու հիւստեածները կազմող նախնական տարրերը, բջիջները, զանազան ձեւեր կ'առնուն եւ այս կերպարանափոխութեանց մէջ շատ անգամ իրենց անհատականութիւնը կը կորսնցնեն, իսկ բոյսերուն մէջ ընդհակառակն անհատականութիւնը կը պահուի շնորհիւ այն առաւել կամ նուազ թանձր թաղանթին որուն մէջ ծածկուած է բուսական բջիջը:

3. Տարբարանական բաղադրութիւն. — Բաղդատութեան այս եզրը շատ լոյս չի տար, մանաւանդ վերջին խուզարկութիւններէ վերջ: Երկար ատեն կարծուեցաւ թէ երբեակ բաղադրութիւնները, այսինքն ածխածինէ, քրոսածինէ եւ քրածինէ շինուած մարմինները բուսոց յատուկ էին եւ քառեակ բաղադրութիւնները, որոնք առաջնոց տարրերէն զատ ունին քուրակածինը՝ կենդանեաց. բայց ուսումնասիրութիւնք ցուցին թէ կենդանական գործարանաւորութիւնք իրենց սովորական վիճակին մէջ ունին երբեակ բաղադրութիւններ (օսլայակերպ եւ շաքարոտ մարմիններ), միւս կողմէն ալ տեսնուեցաւ որ բոյսերն ալ բորակածին ունին: Ի վերջ ամենայնի սա մնաց կանգուն որ բոյսերուն կազմիչ տարրը չորսին մէջէն ածուխն է, իսկ կենդանիներունը՝ բորակածինը:

4. Սննդառութեան եղանակ. — Ըսինք արդէն թէ ապրող էակները նիւթի փոխանակութիւն մը կ'ընեն արտաքին աշխարհին հետ, կը սնանին. բայց այդ փոխանակութեան կերպը միեւնոյնը չէ կենդանեաց եւ բուսոց մէջ: Բոյսն իր սնունդը կ'առնու օդէն եւ հողէն (ջուր, ածխական թթու, ամոնեաք) եւ ասոնցմով

կը շինէ աւելի բազմամասն եւ աւելի անկայուն մարմիններ, նոյն միջոցին դուրս կուտայ թթուածին եւ այսպէս վերածնան(1) գործ մը կը կատարէ: Միւս կողմէ արեւուն լոյսն ու ջերմութիւնը, որք զործօն զօրութիւններ են, կը ծծէ եւ քաղուն զօրութեանց կը փոխարկէ:

Կենդանին ուղղակի կամ անուղղակի բոյսերէն կ'առնու իր սնունդը եւ օդէն աւած թթուածինն միջոցաւ զանոնք կը փոխէ թթուածնաւոր այնպիսի բաղադրութեանց որոց ճշդիւ պէտք ունի բոյսը սնանելու համար:

Կը տեսնուի որ սնման այս երկու եղանակները բոլորովին հակառակ են իրարու եւ զիրար կ'ամբողջացնեն. բոյսը արեւուն լոյսին եւ ջերմութեան միջոցաւ իր տերեւներուն մէջ ունեցած կանաչանիւրովը(2) օդին ածխական թթուն ածուխի կը վերածէ, ածուխը վար կը դնէ եւ թթուածինը դուրս կուտայ, իսկ կենդանին բոյսերուն ամբարած ածուխը կ'առնէ թթուածնով կ'օքսիդացնէ, ածխական թթու կը շինէ եւ օդին կուտայ:

5. Շարժականութիւն եւ Զգայականութիւն. — Շարժելու եւ զգալու կարողութիւններն ընդ երկար կենդանեաց վերապահեալ կարծուեցան, բայց հիմայ երբ տեսնուեցաւ որ անհերքելի կերպով բոյսի բնութիւն ունեցող մարմիններ, ինչպէս լոռերու(3) շարժասեւեւները(4) ջուրին մէջ կը տեղափոխուին քրքուն քարքիչներու(5) միջոցաւ՝ ինչպէս կ'ընեն ամենէն պարզ կենդանիները՝ այդ կարծիքը թողուլ հարկ եղաւ, եւ այն ատեն զգայականութեան մէջ փնտռեցին կենդանեաց տեսակարար յատկանիշը, բայց յուսախաբութիւն. բոյսերն ալ կ'զգան եղեր:

Բնախօսին համար զգայականութիւնը կարողութիւն մ'է հակազդելու դուրսէն եկած գրգռութեանց. այդ հակազդեցութիւնք շարժմամբ միայն կը թարգմանուին եւ անով միայն կրնան չափուիլ: Այսինքն թէ այն էակներն զգայուն են,

(1) Réduction, (2) chlorophylle, (3) algue,

(4) Zoospore, (5) cil vibratil.

ոց վրայ եղած տպաւորութիւն մը իրենց մէջ կը ծնուցանէ շարժումներու շղթայ մը որուն երկարութիւնը համեմատական է դուրսէն եկած ազդեցութեան սաստկութեանը: Արդ այդպիսի հակազդեցութիւններ անպակաս են բուսոց մէջ: Հետեւաբար չէ կարելի ոչ իսկ այդ կարողութիւնը զլանալ անոնց: Լուսերու շարժասեւեբները ոչ միայն կը տեղափոխին ջուրին մէջ լողալով, այլ արգելքներու ներկայութիւնն ալ կը թուին զգալ եւ կը հեռանան անոնցմէ: Աւօթխած նմա-

նիին⁽¹⁾ (զգայնիկ) զգայականութիւնը ծանօթ է արդէն: այդ բոլոր իր թերթիկներն ու տերեւները իրենց ճիւղերուն վրայ կը կծկէ երբ անոր վրայ ներգործել տանք կենդանական զգայականութեան՝ ծանօթ գրգռիչները ցնցում, բախում, այրում, ելեկտրական հոսանք, եւն, վերջապէս կենդանեաց վրայ ազդող թմրեցուցիչները՝ եթեր, քլօռֆորմ միւլենոյն երեւոյթներն յառաջ կը բերեն բուսոց վրայ թէեւ քիչ մ'աւելի թեթեւ:

Ահաւասիկ ասոնց մէջ կ'ամփոփուին գործարանաւորեալ եւ անգործարան մարմնոց եւ յետոյ գործարանաւորեալներուն մէջ կենդանեաց ու բուսոց նմանութիւններն ու տարբերութիւնները: Այս վերջինները կը համառօտեմ հոս այս տախտակին մէջ:

Գործարանաւորեալ էակներ

Բջիջ ունին.
Որոշեալ, տեւական՝ կերպարան ունին.
Իւրացմամբ կ'աճին
Ներսէն դուրս եւ
Որոշեալ ժամանակի մէջ,
Որոշեալ չափով մը:

Անգործարան մարմիններ

Բջիջ չունին.
Առ առաւելն բիւրեղներ ունին.
Պարզ յաւելմամբ կ'աճին
Դուրսէն ներս եւ
Անսահման ժամանակի մէջ,
Անսահման քանակութեամբ:

Գործարանաւորեալ էակներ

Կենդանիներ

Կնճռոտ գործարանաւորութիւն.
Համերաշխութիւն բջիջներու.
Տիրող տարր բորակածին.
Մծում թթուածնի.
Արտաթորում ջրոյ, ածխական թթուի եւ ամոնեաքի
Կանաչանիւթոյ պակասութիւն
Թագուն զօրութեանց փոխարկութիւն
ի գործօն զօրութիւնս
Շարժում կամաւոր եւ
Զգայականութիւն:

Ռոյսեր

Նուազ կնճռոտ գործարանաւորութիւն.
Անհատականութիւն բջիջներու.
Տիրող տարր ածխածին.
Մծում ջրոյ, ածխական թթուի եւ ամոնեաքի.
Արտաթորում թթուածնի
Կանաչանիւթ
Դործօն զօրութեանց փոխարկութիւն
ի թագուն զօրութիւնս
Պակասութիւն շարժման եւ
Զգայականութեան:

Բայց պէտք է միշտ մտաց առջեւ ունենալ թէ այդ յատկանիւններէն եւ ոչ մին բացարձակ է, ինչպէս արդէն առիթ ունեցանք ըսելու: Բայց չմոռնանք նաեւ որ ուսնիլ, ճանչնալ դասաւորել է, եւ դասաւորել՝ նմանութիւններու եւ տարբերութեանց ուշադիր ըլլալով կ'ըլլայ:

(1) Mimosa pudica:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

(Բարձրագոյն դասընթաց)

ԲՈՒՍՈՑ ԳՈՐԾԱՐԱՆՔ

Ա. Արմատ եւ ցօղուն

Բուսոց զորձարանք. — Արմատ եւ նորա մագերն. — Արմատի յատկութիւններն. — Արմատին պատշտոնն. — Ցօղունի մը նկարագիրն. — Գլխաւոր ցօղուն եւ իւր բաժանումն :

1. Ուշադրութեամբ դիտենք *հ* եւ է բոյս մը, օրինակի համար կաղամբ մը որ ծաղկման վիճակին մէջ է. անոր այն երկար մասը որ տերեւներ չունի եւ հողին մէջ մտած է՝ արմատ կը կոչուի. հողէն դուրս եղող մասը որ վարէն վեր աճում ունի, ցօղունն է, ցօղունին վրայ կը գտնուին տերեւներն. վերի ճիւղերուն ծայրը կը տեսնենք փոքրիկ տերեւներ որոց ոմանք գունաւոր են եւ իրարու շատ մօտ կը զրտնուին. ասոնց ամբողջութիւնը կը կազմէ ծաղիկն: Երբ այս երփներանգ թերթիկները թառամին, ասոնց տեղը կուգան գրաւել պտուղները. պտուղներուն մէջ կը գտնուին սերմնահատիկներն որք եթէ խոնաւ հողի մէջ դրուին, կրկին կը ծլին, կ'աճին եւ նմանօրինակ բոյս մը յառաջ կը բերեն, այսինքն եթէ կաղամբի սերմնահատիկ մ'է, յառաջ եկած բոյսը կաղամբ է:

2. Ամէն բոյսի հողին մէջ գտնուող մասը *արմատ* կը կոչուի. արմատն ունի իւր վրայ բազմաթիւ մագեր. արմատին այդ մագերն են որք հողին մէջէն կը ծծեն բոյսին անհրաժեշտ եղող հեղանիւթ մարմինները: Եթէ արմատի մը անմազ մասը ջրոյ մէջ ընկղմենք, բոյսը քիչ ատենէն պիտի թառամի, որովհետեւ անմազ արմատը ինչպէս պիտի կրնայ հողէն ծծել հեղանիւթները, քանի որ այդ պաշտօնը իւր մագերը կը կատարեն: Ամէն արմատի ծայրը կը գտնուի կարծր եւ պնդացած մաս (*coiffe*) մը որ կարծր մարմիններու, խիճերու շփումէն ազատ կը պահէ բոյսը, ցորչափ արմատը աճելով դէպ ի վար տարածէ իւր ճիւղերը հողին

մէջ: Ամէն գլխաւոր արմատ բաժնուած է երկրորդական արմատներու որոնք կը կոչուին արմատիկ (*radicelle*):

3. Արմատ մը ունի հետեւաբար այս գլխաւոր յատկութիւններն. տերեւէ զուրկ է, հողին մէջ դէպ ի վար կը զարգանայ սովորաբար, իւր վրայ կը գտնուին նուրբ մագեր որոց միջոցաւ բոյսը կը ծծէ հողէն իրեն կարեւոր հեղանիւթը, իւր ծայրը կարծր մասով մը պաշտպանուած է, իւր վրայ կը կրէ նաեւ երկրորդական արմատներ:

4. Արմատի մը պաշտօնն է հողին մէջ գտնուող ջուրը եւ զանազան նիւթերը ծծել. արմատը իւր մէջ չի պահեր հողէն առած հիւթը, այլ կը դրկէ զայն մինչեւ ցօղունին եւ տերեւներուն մէջ: Սիրուն փորձով մը կրնանք տեսնել թէ արմատներն ինչպէս այդ հիւթը բոյսին վերի մասերուն մէջ կը բարձրացնեն: Գարնան վերջերը, որմատունկ մը կտրենք պահելով միայն արմատը եւ ապակիէ խողովակ մը հաստատենք արմատին վրայ, այդ խողովակը մեր կտրած ցօղունին տեղը պիտի զրաւէ. քիչ ատենէն պիտի տեսնենք խողովակին մէջ հիւթին բարձրանալը մինչեւ սրոյ կէտ մը. արմատն առնելով այդ հիւթը, հողէն խողովակին մէջ բարձրացուց:

5. Ցօղունը բոյսին հողէն դուրս եղող մասն է, իւր ձեւովն արմատին շատ կը նմանի, կը կրէ իւր վրայ տերեւներ. հետեւաբար տերեւն է ցօղուն մը արմատէն որոշելու միակ նշանը: Եթէ ցօղուն մը հողին մէջ գտնուի եւ անտերեւ լինի, դարձեալ կրնանք ճանչնալ զայն թառամեալ եւ ինկած տերեւներու թողած հետքերէն: Ցօղունն ալ ունի նուրբ մագեր որոնք օգտակարութիւն մը չունին. արմատի մագերուն դերը չեն կատարեր, անոր համար է որ երբ բոյսի մը ցօղունը միայն ջրոյ մէջ զնենք, բոյսը ընդհուպ կը թառամի:

6. Սերմնահատիկէն առաջին անգամ դուրս ելնող ցօղունը կը կոչուի գլխաւոր ցօղուն (*tige principale*), այս ցօղունին վրայ կը կազմուին երկրորդական ցօ-

դուններ որոնք կը կոչուին նաեւ ճիւղեր (tiges secondaires ou branches)։ Ուրեմն ցօղուն մը իւր վրայ ունի տերեւներ, վարէն վեր կ'անի, կարծր մասով մը չի վերջանար, նորածիլ տերեւներ կը կրէ իւր վերջաւորութեան վրայ. զլիսաւոր ցօղունը ծնունդ կուտայ երկրորդական ցօղուններու։ ցօղունն արմատին հողին մէջէն առած հիւթը տերեւներուն մէջ կը զրկէ։

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԸՆԹԱՑՔ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

(ՌՕՊԷՌԻՍԸՆԻ ՄԷԹՈՏՈՎ)

ԵՐԿԻՐՈՐԴ ՄԱՍ

(ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ)

ԲԱՌԱՍՁՆՆՈՒԹԻՒՆ

PREMIÈRE իգական ձեւն է premier ածականին, որ կուգայ լատիներէն primus, առաջին բառէն։ PREMIER ի գլխաւոր ածանցներն են՝

Premièrement, զառաջինն, նախ
Premier, (գոյ.) առաջին օր (ամսուան, տարւոյ)։ Առաջին յարկ։ Պէտ
Prémices, երախալիք
Prime, առաջին, եւն.
Primer, առաջին ըլլալ. գերազանցել
Primeur, կանխահաս պտուղ կամ բանջար, նորի
Primitif, նախնական
Primitivement, ի սկզբան, յառաջագոյն
Primauté, առաջնութիւն
Primaire, նախնական։ Գլխաւոր
Primevère, զարնամածաղիկ, կուլացնծուկ
Primo, նախ
Primordial, նախաւոր
Primordialement, ի բնէ

1. Ածականներն, ինչպէս նաեւ գոյականներն, երկու սեռ կ'ունենան. արական եւ իգական։

2. Ածական մը իգական ընելու համար

ընդհանրապէս ծայրը համը (առանց accentի) e մը կ'աւելցնեն։

3. Եր վերջաւորուած ածականներն իգականի դարձնելու համար ծայրը e մը կ'աւելցնեն եւ վերջըթեր (վերջինէն առջի) eին վրայ accent grave (')¹ մը կը դնեն։

LEÇON կուգայ լատիներէն lectio ընտրութիւն կամ ընթերցանութիւն բառէն, որ ինքն ալ կ'ածանցի legere ընտել, ընթեռնող կամ փաղել բայէն։ Իգական է, թէեւ, ըստ ձեւին, արական ըլլալու էր, ինչպէս պիտի բացատրուի քիչ մ'անդին։ Արմատն է lire կարդալ, լատիներէն legere բայէն։

LIRE ի գլխաւոր ածանցներն են՝
Relire, վերընթեռնուլ, նորէն կարդալ
Liseur, ընթերցասէր
Lisible, ընթեռնի
Lisiblement, դիւրընթեռնի
Illisible, անընթեռնի
Lecteur, ընթերցող
Lecture, ընթերցանութիւն
Leçon, դաս
Légende, պատմութիւն վարուց սրբոյ։

Հրաշապատում եւ ժողովրդական գրոյց
Légendaire, հրաշապատում
Élire, ընտրել
Réélire, նորէն ընտրել
Élite, ընտիր մաս
Éligible, ընտրելի
Éligibilité, ընտրելիութիւն
Inéligible, անընտրելի
Rééligible, վերընտրելի
Électeur, ընտրող
Électif, ընտրական, ընտրութեամբ եղած
Élection, ընտրութիւն
Électoral, ընտրական (իրաւունք եւն.)
Électorat, ընտրելու իրաւունք

Lire ի միւս ածանցներէն իւրաքանչիւր խումբին մէկ գլխաւոր բառը դնելով կը գոհանամք.

Intelligent, etc. (2) խելացի

(1) Երեք տեսակ շեշտ accent կայ. accent aigu (') եւ accent grave (') եւ accent circonflexe (^)։

(2) Etc. համառօտագրութիւն et cætera եղ սեղեռա լատիներէն բառերուն, որք կը նշանակեն եւայլն։

Élégant, etc. վախելուչ

Diligent, etc. ժաշգան

Cueillir, etc. փաղել

Négliger, etc. զանց առնել, անփութ
բողոլ

4. Le jeune Alexis — La paresse —
Les proverbes. Փրանսերէն որոշիչ յօդն
երեք ձեւ ունի, le, la, les որոնք կը հա-
մապատասխանեն հայերէն որոշեալ բա-
ռի մը ծայրը գտնուած ըին կամ ին :

5. Le կը դրուի ԱՐԱԿԱՆ եւ ԵԶԱԿԻ գո-
յականներու առջեւ : La ԻԳԱԿԱՆ եւ Ե-
ԶԱԿԻ գոյականներու առջեւ : Les ՅՈԳՆԱ-
ԿԻ գոյականներու առջեւ (թէ՛ արական
թէ՛ իգական) :

JEUNE, լատիններէն juvenis էն, ածա-
կան մ'է որ միեւնոյն ձեւն ունի թէ՛ ար-
ականի եւ թէ՛ իգականի համար :

6. Համը բոլ վերջաւորուած ածա-
կաններուն արականի եւ իգականի ձեւն
նոյնն է :

JEUNE ի գլխաւոր ածանցներն են՝

Jeunet, մասադուկ

Jeunesse, երիասարդութիւն

Rajeunir, երիասասրդացնել. պզտիկցնել
(սարիքը)

Rajeunissement, ի մանկութիւն դար-
ձնելն կամ դառնալն

Jouvence, երիասասրդութիւն

Jouvenceau, պատանի

Jouvencelle, երիասասրդունի

Juvenile, երիասասրդական

ÉTAIT եղակի երրորդ դէմքն է être,
ըշտ ածականոն բոյի սահմանական եղա-
նակի անկատար ժամանակին :

7. Un եւ իւր իգականը une կը նշա-
նակեն մը, մի, մեկ : UN ի գլխաւոր ա-
ծանցներն են՝

Unique, միակ

Uniquement, լոկ

Unité, միութիւն

Unanime, միաբան

Unanimement, միաբանութեամբ

Unanimité, միաբանութիւն

Uniforme, միաձեւ

Univers, տիեզերք

Universel, տիեզերական

Universalité, ընդհանրութիւն

Universellement, առ հասարակ

Université, համալսարան

Uni, կցեալ : Միաբան : Հարք : Անպահոյն

Uniment, միօրինակ : Պարզ կերպով

Unir, միացնել

Union, միաւորութիւն

Unisson, միաձայնութիւն

Désunir, փակեցնել, անջատել

Désunion, անջատում

Réunir, կցել

Réunion, կցումն. հաւաքումն

ASSEZ կուգայ հին Փրանսերէն ses էն,
որ ինքն ալ կ'ածանցի լատիններէն satis,
ըս բառականի բառէն զուգորդեալ à նա-
խագրութեան :

BON կուգայ լատիններէն bonus, աղէկ
բառէն : Իգականն է bonne : BON ի գլ-
խաւոր ածանցներն են՝

Bon (գոյ.) հասուցի (պոնո)

Bonasse, պարզամիտ

Bonne, աղախին : Իայեակ

Bonnement, բարութեամբ : Բարեմտօրէն

Bonté, բարութիւն : աղէկութիւն

Débonnaire, հեզահամբոյր

Boni, ծախքէն աւելցած գումար

Bonbon, շաքարեղէն

Bonbonnière, շաքարեղէնի տուփ

Abonnir, rabonnir, աղէկցնել

Abonner, բաժանորդագրել

Abonné, բաժանորդ

Abonnement, բաժանորդագրութիւն

Bonifier, աղէկցնել : Պակսած դրամը լեցնել

Bonification, բարեմումն : Զեղչ

GARÇON, հին Փրանսերէն gars բառին
հայցական հոլովը, արական է :

8. Բոլոր արու անուններն արական
են. բոլոր էգ անուններն իգական են,
ինչ որ ալ ըլլայ իրենց վերջաւորութիւնը :

9. Qui յարաբերական դերանունն (pro-
nom relatif) մ'է եւ կը համապատաս-
խանէ հայերէն որ, որք, որոնք ի : Հարց-
ման մէջ կը նշանակէ ո՞վ, զո՞վ :

N'AVAIT փոխանակ ne avait ի :

10. Ne ժխտական մասնիկ մ'է որ կը
գործածուի մերթ առանձին, մերթ ու-
րիշ բառի մը հետ միացեալ, ինչպէս ne ...

pas, ne... point, ne... rien, ne... jamais, եւն :

11. Երբ ne ն ձայնաւորով կամ անձայն h ով սկսած բառի մ' առջեւ գտնուի, e ն կը ջնջուի եւ տեղը ապաթարց (apostrophe) կը դրուի : Միեւնոյն կանոնին կ'ենթարկին je, ես. me, զիս, ինձ. te, քեզ, զքեզ. se, ինքզինքը, ինքզինքին, ինքզինքնին, ինքզինքնուն, իրարու, զիրար. que, զոր, թէ. ce, այս (դերանուն), le, de, զորս մի առ մի պիտի տեսնենք : La ին ալ a ն կը ջնջուի եւ տեղն ապաթարց մը կը դրուի միեւնոյն սլարագային մէջ :

AVAIT եզակի երրորդ դէմքն է avoir անկանոն բայի սահմանական եղանակի անկատար ժամանակին :

QU'UN փոխանակ que un ի : Տես 11 :

QUE շատ նշանակութիւններ ունի : Իրմէ առաջ ne ժխտական մասնիկը գըտնուած ատեն՝ միայն, ոչ ուրիշ... բայց երբ ի իմաստով կը գործածուի :

SEUL կուգայ լատիներէն solus էն : Իւր գլխաւոր ածանցներն են՝

Seulement, միայն

Solitaire, մենաւոր

Solitairement, առանձին

Solitude, միայնութիւն

DÉFAUT, որ հին ատեն կը գրուէր défaut, կուգայ faillir թերանալ, մեղանջել, վրիպել բայէն, կազմուած լատիներէն fallere բայէն : Faillir ի գլխաւոր ածանցներն են՝

Failli, սնանկացեալ

Faillible, սխալական

Faillibilité, սխալականութիւն

Infailible, անվրիպելի : Անսխալական

Infailibilité, անվրիպելութիւն : Անսխալութիւն

Infailiblement, անվրէպ

Défaillir, պակսիլ : Տկարանալ, նուաղիլ

Défaillant, նուաղեալ : Դատազանց

Défaillance, նուազութիւն : Տկարութիւն :

Նուաղումն

Faute, յանցանք : Սխալ : Կարօտութիւն

Fautif, մոլորական : Բազմավրէպ

DÉFAUT արական է :

12. Բոլոր ֆրանսերէն գոյականները կամ արական են կամ իգական :

13. Գոյականներու արական կամ իգական ըլլալը կ'որոշուի կամ անոնց սեռով (8) եւ կամ վերջաւորութեամբ :

14. Այն գոյականները որ համը ունի չեն վերջաւորի՝ ընդհանրապէս արական են : Այս կանոնն ունի բացառութիւններ, որք ցոյց պիտի տրուին :

PARESSE կուգայ լատիներէն pigritia ծուռութիւն բառէն : Իւր ածանցներն են՝

Paresser, ծուլանալ

Paressieux, ծոյլ

Paressseusement, ծուլաբար

PARESSE իգական է :

15. Համը ունի վերջաւորեալ գոյականներն ընդհանրապէս իգական են :

Յ. Թ. ՆԻՆԳԼԵԱՆ

ՆՈՒԷՐ

Պէտքէրեան վարժարանի սաներէն Ագնիւ Պ. Ստեփան Մէյմարեան նուիրած է մէկ տարեկան Մասիս իւր ծննդավայր Աֆիօն Գարահիսարի Սահակեան վարժարանին :

ԼՈՒՐՔ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Առեւտրական գիտելեաց կիրակնօրեայ վարժարանը, զոր հաստատած է Յակոբ Էֆէնտի Բագրատունի ընդ հովանաւորութեամբ Բերայի կրթական խնամակալութեան, նախորդ կիւրակէ հրապարակային քննութեան հանդէս մը կատարեց, եւ 16 երիտասարդք շրջանաւարտ հռչակուեցան :

Կիրակնօրեայ վարժարանի գաղափարը գեղեցիկ և օգտակար է. ընտիր միջոց մ'է այն որով վարժարանէն թերուս ելած, կամ բնաւ կրթութիւն չստացած և կամ այս ինչ կենցաղօգուտ պիտանի ծանօթութեանց պէտքն զգացող չափա-

հասք կրնան իրենց պակասը լրացնել, օգտաւէտ կերպիւ գործածելով իրենց հանգստեան մի քանի ժամերը:

Այս կարգի առաջին ու արդիւնաշատ վարժարանը մեր մէջ եղած է Ղալաթիոյ Անճնուէր ընկերութեան վարժարանը, որ ցարդ կը շարունակէ: Փափաքելի է որ այս օրինակներն հետեւողներ ունենան ուրիշ թաղերու մէջ ալ:

Նոյն օրը կատարուեցաւ նաեւ Բերայի Նարեկեան և Ս. Լուսաւորչեան կրկին մանկապարտէզներու աշակերտաց հանգէն:

Երկսեռ մանկունք երգեցին, պարեցին, մարմնամարզ ըրին, փոքրիկ ոտանաւորներ արտասանեցին և Ֆրէօպէլեան պարամանց վրայ քննութիւն տուին:

Ներկայք շատ գոհ մնացին այն արդիւնքէն զոր ձեռք բերած էին սոյն երկու մանկապարտէզներու տեսչուհի Օր. Հերանոյշ Աղլազանեան և Ս. Լուսաւորչեան մանկապարտէզին վարժուհի տիկին Պէտթրիս Զալլըճեան, օժանդակութեամբ իրենց օգնականաց Օր. Զապէլ Թաշճեանի եւ Օր. Սաթենիկ Գարունեանի:

Ռէթէոս էֆէնտի Գրիգորեան, բազմաձմուտ տաճկագէտն, ինքնայօժար յանձն առած է անձնուիրաբար դասախօսել Մայր-Վարժարանի մէջ, որոյ համար Գումգաբուի Թաղ. Խորհուրդը շնորհակալութիւն կը յայտնէ լրագրաց միջոցաւ:

Ն Ե Ր Փ Ի Ն

Էնկիւրիի նահանգին Կրթական տնօրէն կարգուած է Ալաէտտին էֆէնտի, տնօրէն երկրորդական վարժարանին Պրուսայի:

Բաղէչի նահանգին Կրթական տնօրէն կարգուած է Շէրիֆ էֆէնտի, Կրթական նախորդ տնօրէն Էնկիւրիի:

Կրթական Նախարարութիւնը պաշտօնանկ ըրած է Միտիլլիի Յունաց վարժարանին Տնօրէն Պէրնարտաքի էֆէնտին, իւր յոռի ընթացիցը համար:

Նոյն Նախարարութիւնը, Հալէպի մէջ աղջկանց վարժարան մը հաստատելու համար, հարկ եղած հրամանները տուած է տեղւոյն Վսեմ. Կուսակալին:

Քարբերդի Նահանգին մէջ աղջկանց վարժարանի մը բացումը տեղի ունեցած է, և այս առթիւ բարամաղթութիւնք կատարուած են վասն կենաց Օգոստոս փառ Սուլթանին:

Կրթական Նախարարութիւնը տպեալ հրահանգներ ցրուել տուած է Մայրաքաղաքիս ու արուարձանաց 300 վարժարանաց տնօրէններուն, պատուիրելով որ մեծ խնամով հսկեն կառավարիչներուն, տնտեսներուն եւ այլ պաշտօնէից վրայ, որպէս զի տղաքները չխոշտանգեն ու չնախատեն:

Նախարարական պաշտօնագիրը բացորոշապէս կը հրամայէ նաեւ հոգ տանիլ վարժարանաց մաքրութեան ու առողջապահական պայմանաց, և չընդունիլ տարափոխիկ հիւանդութիւններէ վարակուած տղաքը:

Երուսաղեմայ մէջ Համիտիյէ անունով արհեստական վարժարանի մը հաստատման ձեռնարկուած է:

Կեսարիոյ մէջ երկրորդական (իտալիյէ) վարժարան մը պիտի բացուի, և ասոր համար յատուկ չէնք մը պիտի կառուցուի:

ՄԵԿ ԵՐԿՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻԻ

Մասիսի հրապարակ ելնելէն ի վեր ազգային թերթերու մէջ մէկ երկու քննադատութիւնք երեւցան, որոց կ'ուզեմք համառօտակի պատասխանել:

Առաջինը Հայրենիքի մէջ տեսնուեցաւ. անոր հեղինակը գլխաւորաբար Ա. թուոյն մէջ տեսնուած ակադեմիական ճառէ մը, բազմանգամ պարբերութիւններէ, գրաբարախառն ասացուածներէ ու երկար բառերէ* վճռապէս կը հետեւցնէ թէ Մասիս չ'իրականացներ մանկավարժական թերթի մը գաղափարը եւ հետեւապէս անյաջողութեան դատապարտուած է:

Ճշմարտան ըսելու համար, մենք Հայրենիքէն կ'սպասէինք քան զայս լուրջ քննադատական մ'ու նուազ հապճեպ եզրակացութիւն մը. Մասիսի ոճն ու լեզուն կրնան տարբերիլ Հայրենիքի յղացած և ընտրած ոճոյ և լեզուի իտէպէն, որ անշուշտ ամենունը չի կրնար ըլլալ, բայց յայտնի է որ տարօրինակ ու նոր բան մը չեն ներկայացներ, այլ ընդհակառակն կը նոյնանան 20-30 տարիէ հետէ մեր գրողներու ամենամեծ մասին ընդունած և գործածած լեզուական ձեւին հետ: Բաց աստի, այս եւս յայտնի է որ գրուածներուն նիւթը գէթ ձեռոյն չափ, եթէ ոչ աւելի, կարեւորութիւն պարտի ստանալ ո'ր և է գրական գնահատման մէջ: Եւ սակայն Հայրենիք չէր ըսեր եւ ոչ մեկ բառ որ վերաբերութիւն ունենար Մասիսի Ա. թուոյն մէջ երեւցած յօդուածոց գաղափարներուն եւ ուղղութեանը: Աւելի դառն, աւելի կծու, բայց թերթին սքիւն ու նպատակն աւելի

մօտէն ու աւելի գիտակցօրէն շօշափող քննադատութիւն մը գոհունակութիւն անշուշտ պիտի պատճառէր Մասիսի խմբագրութեան, բայց բարեբախտութիւնը ամենուն համար չէ:

Երկրորդը Ա. Յովհաննէսեան անծանօթ ստորագրութեամբ յօդուած մ'է ձերիսեի Շարգիյեի մէջ երեւցած, որ կը քննադատէ մեր Բ. թուով հրատարակուած օսմաներէնի դաս մը ի Պետրոս Էֆ. Կարապետեանէ:

Ամէն տաճկագէտ տեսաւ որ այդ յօդուածի բուն ֆնկադասական մասը ս'ըջափ անկարեւոր է, վասն զի հիմնուած է գրեթէ միայն տաճկերէնի արտասանութիւնը հայաստանեայցեան կերպիւն վրայ, որոյ մասին դեռ ընդհանուր կերպով ընդունուած եղանակ մը չունինք:

Ինչ որ ցուալի է՝ այս է թէ այդ յօդուածը ռեֆրակի մը ձեւն ունէր ի նպատակ Միհրան Էֆ. Արիկեանի և անոր դասագրքերուն: Պետրոս Էֆ. Կարապետեանի գլխաւոր յանցանքն ըլլալ կ'երեւէր իր վարպետէն յետոյ ինքն ալ դասագրքեր ու հաւնուած դասագրքեր յօրինելու ձեռնարկելը, և վերջապէս իրրեւ թուրքերէնի ուսուցիչ կանուխ ասպարէզ ելնելը: Բայց զարմանալի չէ՞ որ Ա. Յովհաննէսեան, ո'վ որ ալ է, ձախող ծառայութիւն մը մատուցանելու ելած է Արիկեան Էֆէնտիի, անոր երկար տարիներէ ի վեր հիմնուած հմուտ տաճկագիտի ու դասագրոց կարող հեղինակի համարուը նորեկի մը դէմ պաշտպանուելու կարօտ ցոյց տալով: Եւ այդ նորեկը ո'վ է, եթէ ոչ նոյն ինքն Արիկեան Էֆէնտիի պատուաբեր աշակերտներէն մին, որուն մէկ դասագիրքն ալ (Սարֆը) Ուսման Խորհրդոյ մէջ նոյն իսկ Արիկեան Էֆէնտի գնահատած ու վաւերացման արժանի ներկայացուցած է: Պետրոս Էֆէնտիի ապագայ ունեցող օսմաներէնի երկտասարդ ուսուցիչներէն է, վասն զի ո'չ միայն արդէն գնահատելի հմուտութիւն մը ձեռք բերած է լեզուին, այլ նաեւ ու մանաւանդ ունի մեքոս, ուսուցանելու տեղ և զարգացուցիչ աշխատասիրութիւն: Իր կարողու-

* Դժբաղդարս այս տեսակ բառից իրրեւ նմոյշ տեսնուած բառը (զոհարածոչնոմանն) տպագրական սխալ մ'եղած է պարզապէս, վասն զի, փոխանակ Դոհար-բոչնամանն, այսինքն միութեան գծով մը, շարուելու, ինչպէս կը կրէր յօդուածին ձեռագիրը, սրբագրողի անուշադրութեամբ մը միաձոյլ բառ մը եղած է տպագրութեան մէջ: Այսու հանդերձ՝ եթէ ուզուի՝ քննադատութեան պէտքին համար կարելի է շնորհել այդ ձեւն ալ, բանի որ մեր լեզուին մէջ չեն պակսիր յատարարոյժ, ինչպէս միաբանաւոր, անձնապահապետ, անձնորարար եւայլն:

թեան շնորհիւն է որ, վարժարանէն ելնելէ գրեթէ տարի մը յետոյ, ընդունուեցաւ իբրեւ անդամ Խմբագրական Դիւանի Նախագահ Ատենի Պետական Խորհրդոյ, Ամենայնի քաջալերանաց ու գովեստի արժանի կը համարինք զինքը և իր աշխատակցութիւնը Հանդիսիս անկեղծ գոհունակութեան առիթ:

ՀԱՐՑՄԱՆ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սամաթիայէն առ մեզ ուղղուած նամակ մը, տեղւոյն վարժարանաց Պատ. Հոգաբարձութեան մէկ տնօրինութիւնը հաղորդելով, կը հարցնէ մեզ թէ այդպիսի տնօրինութիւն մը օրինաւոր կը գըտնենք թէ ոչ:

Պատ. Հոգաբարձութիւնը որոշած է որ երեկոյեան արձակուրդք տեղի ունենան սապէս:

1. Ընտելարան Ն. Վարդուհեան վարժ ի ժամ 5ին (ը. Ե.)
2. Ուսումնարան » » » 5¹/₂ »
3. Ընտելարան Ս. Սահակեան » » » 5³/₄ »
4. Ուսումնարան » » » 6¹/₄ »
5. Մանկապարտէզ » » » 5 »

Առաւօտուն դասերը կ'սկսին 8 ին (ը. Ե.): Ըսել է որ տղայք 9 ժամէն մինչեւ 10¹/₄ ժամ պիտի անցունեն դպրոցին մէջ:

Այս տնօրինութեան դէմ առարկութիւններ ըրած են չորս ուսուցիչք, բայց Հոգաբարձութիւնը կարեւորութիւն չէ տուած անոնց դիտողութեանց. իր որոշումն անփոփոխ պահած է:

Մեզ ուղղուած հարցման պատասխանը կը գտնուի արդէն Ազգային Նախնական Կրթութեան Կազմական Կանոնագրին ԻԵ. յօդուածին մէջ. Ժամանակացոյցի կարգադրութեան խնդիրն է այդ, զոր Տեսուչք մէն մի դպրոցական տարւոյ սկիզբը պատրաստելով՝ պարտին ներկայել Ուս. Խորհրդոյն կամ Կրթական Տեսչին ի քըննութիւն և ի հաստատութիւն: Յիշեալ յօդուածը, դպրոցական Ժամանակացոյց-

ցի մը ընդհանուր պայմանները գծելով, օրական գրադմանց (դաս կամ սերտողութիւն) համար կը սահմանէ 6 ժամ, դասաժամուց մէջտեղը 10 ական վայրկեան դադար, և առաւօտեան ու երեկոյեան ժամուց մէջտեղը ճաշաժամով ի միասին՝ 1¹/₂ ժամու հանգստեան ու զբոսանաց միջոց մը: Հետեւաբար ըստ կանոնագրին դպրոցական օրուան տեւողութիւնը պիտի լինի 8 ժամ և 10 վայրկեան:

Պատ. Հոգաբարձութեան տնօրինութիւնը կը հակառակի Կրթական Օրէնքին տառին ու ոգւոյն: Տղայք պիտի ըլլան որ օրինապէս սահմանուած Ժամանակէն մինչեւ երկու ժամ աւելի պիտի մնան դպրոցին մէջ, այս տաք օրերուն, և ի հարկէ՝ ուսուցիչք ալ ի միասին: Զրի տանջանք մ'է անշուշտ այս որ կը տրուի անոնց եւ ասոնց, ի՞նչպէս պիտի անցունեն տղայք այդ երկու ժամերը. չեմք կարծեր թէ բաց օդի մէջ խաղալով, այլ արեւէն տաքցած, արտաշնչութիւններէ ապականած սրահներու մէջ անշարժ նստելով: Աշխատելով, պիտի ըսուի. բայց տղայք, այնչափ ժամեր դպրոցի մէջ անցունելէ և դասառութեամբ ու դասուց՝ պատրաստութեամբ իրենց գլուխը յոգնեցնելէ յետոյ՝ կարող են այլ եւս բան մ'ըմբռնել. ընդարմացած է ալ իրենց ուղեղը, եւ ազատ երթեւեկի, շարժման, վազելու, վազվաւազելու պէտք ունին վերաշինուելու, կազդուրուելու համար: Ահ, մի՛ շատ փակէք այդ թռչունները որք, կը տեսնէք, որք քանի քանի անգամներ դէպ ի պատուհանները կը դարձնեն իրենց անոյշ աչքերը յորս ազատ օդին մէջ թեւածելու դժուարաւ զսպուած անձուկ մը կը կարդացուի. — Եւ յետոյ ուսուցիչք ալ իրաւունք ու պէտք ունին այդ հանգստեան. իրենց արդէն դժուարին պաշտօնը անտանելի ըլլալու աստիճան տաժանելի պէտք չէ ընել, եթէ ամառը, ցերեկները երկայն են, է՛հ, ի՞նչ ընել... գիշերներն ալ կարճ են, այնպէս չէ՞:

Պ Ա Տ ՈՒ Ա Կ Ա Լ Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ի Յ Ք

ԳԵՐ. Տ. ՄԵԼԻՔԻՍԵԳԵԿ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

» Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՐԺ. Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

» Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԽԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

ՄԵԾ. ՏՕՔԹ. ԵԳՈՒԱՐԳ ԷՖԷՆՏԻ ՄԱՍԻՍ

» ԵՂԻԱ » ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

» ԹՈՎՄԱՍ » ԹԷՐԶԵԱՆ

» ԿԱՐԱՊԵՏ » ԻԹԻՒՃԵԱՆ

» ՀՐԱՆՏ » ԱՍԱՏՈՒՐ

» ՄԱՏԱԹԻԱ » ԳԱՐԱԳԱՇ

» ՅԱԿՈԲ » ԳՈՒՐԳԷՆ

» ՅԱՐՈՒԹԻՒՆ » Ն. ՄՕՍՏԻՉԵԱՆ

» ՅՈՎՍԷՓ » ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

» ՏՕՔԹ. ՆԱԶԱՐԷԹ » ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

» ՆՇԱՆ » ԳԱԼՖԱՅԵԱՆ

» ՏՕՔԹ. ՊԵՏՐՈՍ » ՄԱԽՈՖԵԱՆ

» ՎԱՀԱՆ » ՄԱՆՈՒԿԵԱՆ

» ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ » ԹՈՐԳՈՄԵԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԼԵՒՈՆ ՏՕԼՍՏՕՅԻ

ԿՐԵՅՑԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

ԽՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ

Գիւն 5 դր.

Կը վաճառուի յօգուտ Միացեալ Հնկ. վարժարանաց

ՄԱՍԻՍ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Մանկավարժութիւն — Դաստիարակութեան գիտութեան ու պատմութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մեցման դրուած հարցումներ:


2. Դասախօսական — Նախակրթական սիպար դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարելու ու նոր դասընթաց, հրահանգք, եւ անշատ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Դննական — Դասագրոց արժանաւորութեան մասին քննադատական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց ճշգրտութիւնք:

4. Տնօրէնութիւնք — Ուսումնական կարգի մասին և Ազգային Վարչութեան իմաստն Ազգային Վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային, Ներքին եւ Արտաքին կրթական լուրեր եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ շահեկան եւ հրահանգք գրութիւնք:



ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագիւնն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40 դր. իսկ զաւառաց համար 50 դր. քրթասարի ծախիւք մեր վրայ: Իւրաքանչիւր քերթի գիւնն է 2 դր.: Գաւառներէ բաժանորդագիւնի փոխարէն նամակագրուած եւս կ'ընդունուի 15 % գեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէտք է դիմել առ Տնօրէնն Յովհաննէս Արամեան, Կեդրոնական գրաստուն, Կ. Պոլիս, Չափմանքըլար քիւ 59: